шкаф.
полка. 202-
№ 43 245
2000

60ա 75կոպ
№ 3234
9(47.925)

# ԱԶԳԱ բանութիւն Թագաւորացն Հայոց․ յոր- դւոց յորդիս ։

Համառօտեալ 'ի Մովսիսէ Խո րենացւոյն ։

8174-57



Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

8177-57

* Առաջին Հայոց Ազգաբանութեան
Թագաւորացն հայոց Մեծաց՝ ի նախահօ-
րէն Ադամայ: յորդւոց որդիս. Համառօ-
տեալ որոյես զծառապանակիրք. Եւ սա
գե՞ ըն Հայք. Խորեն՝ յ աղագա Յոհնէրեան

Արտաշէսեանք:

ԱԴԱՄ ԾՆ
նաւ զՍէթ
ՍԷԹ ԾՆ
նաւ զԵ-
նովս: Ենովս ծնաւ զկայնան:

Կայնան ծնաւ զմաղաղիէլ: Մա
ղաղիէլ ծնաւ զյարեթ: Յարեթ
ծնաւ զենովք: Ենովք ծնաւ ըզ
մաթուսաղա: Մաթուսաղա ծնաւ
զղամէք: Ղամէք ծնաւ զնոյ:

Ի նոյի ժամանակին յայտնէ ամենե
ցուն որ եղև ջրհեղեղն:

Եւ աստուստ ազգաբանութիւն
ազգիս հայոց յորդւոց յորդիս հա
մառօտեալ ըստ զգաւազանագիրք·
թէ ուստիեն հայք, և որո՞յ սակի
կոչեցան արամեան. կամ հրմէ
նիեան:

Որպէս թարգմանիչն մովսէս խո
րենացին պատմէ, երկրորդ հօրն
աշխարհի նոյի՝ երիս որդիս ցու
ցաւ. Սեմ, Քամ, Յաբեթ:
Եւ մեր ազգի գաւազանն ՚ի յաբե
թայ կրտսեր որդւոյն սերեցաւ
այսպէս: Նոյ ծնաւ զյաբեթ:
Յաբեթ ծնաւ զգամեր: Գամեր
ծնաւ զթիրաս: Թիրաս ծնաւ



ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна

զԹորգոմ։ Թորգոմ ծնաւ զՀայկ։
Որ է ՚ի երրորդ ծնունդ Նոյի նա
հապետի։

Այս Հայկ մի էր ՚ի. Հք̃ տանու
տեարց. որք շինեցին զաշտարակն
այր քաջ և երևելի։ Եւ յետ փլա
նելոյ ամբարտակին, Ներբրովթն
որ է Բէլ. գառնացաւ ՚ի վերայ ա
մենեցուն։ Եւ Հայկն էառ զորդի
իւր զԱրամանեակ եւ զայլ որդիսն և
զԹոռունսն ։Յ̄. արամբք, ընտա
նեօք և ընչիւք և եկն յերկիրն Արա
րատու և շինեաց իւր տուն և բնա
կութի անդ։ Տեսեալ զայն Ներբ
րովթն կոչեաց զՀայկ ՚ի բաբիլոն,
Թէ եկ ՚ի ներքոյ իշխանութեան
իմոյ կացիր։ Եւ իբրև ոչ հնազան
դեցաւ Հայկն, Ներբրովթն առեալ
զզօրսն իւր եկն ՚ի վր̃ Հայկայ
պատերազմաւ ՚ի սպանանել զնա։
Եւ Հայկն սակաւ զօրօքն ել ընդ
դէմ Ներբրովթին և եհար նետիւ

'ի կռուածմն Նեբրովթին եսպան ըզ
նա, եւ դարձաւ 'ի տուն իւր: Որոյ
յանունն կոչեցաք մեք հայկ. եւ
երկիրն մեր Հայաստան:

Արմանեակ որդի Հայկայ, բնա
կեցաւ 'ի լեառնամէջ դաշտին. եւ
կոչեաց զլեառն՝ արագած: Սա կե
ցեալ ամս յոլովս՝ ծնանի զարմայիս
եւ այլ բազում որ երկու եղբարք
էին: Խոռ, յորմէ՝ ազգն խորխո
րունեան: Եւ մանաւաղ, յորմէ
ազգն մանաւազեան: Եւ եւորդին
մանաւազայ բազ՝ 'ի ծովն աղի. եւ
բնակութիւնս շինեաց անդ, յոր
մէ ազգն բզնունեաց 'ի գաւառն
ժանայ:

Արմայիս որդի արամենակայ,
շինեաց տուն յեզր գետոյն արա
զու. եւ յանուն իւր կոչեաց զնա
արմաւիր: Եւ զգետն կոչեաց յա
նուն Թոռին իւրոյ Երաստայ՝ ե
րասխ. Եւ զորդին իւր՝ զշարա շա

տանէր և յոլովածին՝ առաջէ 'ի
հիւսիս 'ի դաշտ մի արդ աւանդ՝
բնակիչ անդ։ յորոյ անուանն կոչե
ցաւ երկիրն շիրակւան և շիրակա
ւան. այսինքն շիրաքաւան. և լը
ցաւ աշխարհն մարդկամբ։

Ամասիա որդի արմայիսայ։ Սա
բնակի յարմաւիր։ Սա շինեաց ·ե̃
տուն մերձ 'ի լեառն հարաւոյ, և
եդ երկու որդւոյն փարախայ՝ և
ցոլակայ կայտառին. և կոչեաց զա
նուն նոցա փարախոտ և ցոլակերտ։
Իսկ զլեառն կոչեաց յանուն իւր՝
մասիս։

Գեղամ որդի ամասիայի, արի՛ և
կայտառ։ Սա ծնաւ զհարմա։ Սա
շինեաց զբազում տեղիս և զեզր
ծովակին գեղամայ, որ կոչեցաւ
գեղ արքունի։ Իսկ որդւոյ իւրոյ
Սիսակայ, որ էր անձնեայ և բարե
տեսիլ և կորովաբան, սահման հա
տանէ 'ի ծովէն մինչև 'ի գետն ե-

թասխ, ընդ դաշտն քաջավայր, որ է
երկիր սիսակայ: և կոչեցաւ սիսի
եան որ է սիւնիք: Յետոյ 'ի սոր ծը
նընդոցն առ արտաշիսիւ՝ վարաժ-
անուն ունին 'ի վէր որսոյ լինի կար
գեալ. յորմէ ասեն լինել տունն
վարաժնունիս:

Հարմա՝ որդի Գեղամայ. սա ծը
նանի զարամ: եսակաւակնեայ լեալ
մեռանի:

Արամ որդի Հարմայի. սա բա
զում գործ քաջութե եցոյց պա
տերազմաւ: Եւ ընդ արձակեաց
զաշխարհն իւր ընդ չորս կողմունս.
Յորոյ անուանն ամ ազգք զաղգս
մեր կոչեցին արամեան երմենի և
արմէնիեան: Զսա Թագաւորն նի
նոս իւրն երկրորդ կոչեաց պատուե
լով: Եւ համարձակութի տայ նը
մա վարսակալ ունել մարգարտեայ:
Միդացւոց յաղթեաց եկին .ծռ.
զօրօք, հարկաւորել զՀայս: Եւ

արամ քաշ էլ ընդ դէմ նոյա և
կոտորեաց զնոսա։ Եւ զնխ-ջար կո
չեցեալ զբռնաւորն մարդեա՛ կա
լեալ եբեր 'ի պարիսպն յարմաւիր։
Բարշամ ոմն ասորի հսկայ՛ (զոր յե
տոյ 'ի շատ ժամանակս չոծ պաշ
տեցին ազգն ասորոց,) եկն 'ի վե՛ր
արամայ. խռ՛ն հեծելօք և. ետ՛ն հե
տևակօք։ Եւ արամ էլ ընդ առաջ
նր և փախստական արար զզօրմնր։
Եւ բարշամ անկաւ առաջի զինա
կրացն արամայ և մեռաւ։ Եւ յեր
կիր նր արամ եհաս։ Պայապիս քայ
աղ՛ տիտանեան ոմն՝ 'ի մէջ երկուց
ծովուց պոնտոսի և ովկիանոսի. և
յառաջ խաղացեալ գնաց և կոտո
րեաց հալածեաց զզօրս նր մինչև
յեզր ծովուն ելկղացոյն, և դարձաւ
'ի կապադովկիա։ Եդ զմշակ ոմն
անդ բռնաւոր. և հրամայեաց չի
նել քաղաք. զորև կոչեաց մաժակ.
այնէ մաժակ կեսարիա։ Եւ եթող

ընդ նմա անձինս ․ժռ․ և հրամայ
եաց բնակչացն լեզու հայկական
ուսանիլ, որ կոչի մինչև ցայսօր
երկիրն այն յունաց լեզուաւն՝ բը
րոգոն արմէնիեան։ Այսինքն ա-
ռաջին հայք։ Եւ անտի մինչև
յիւր աշխարհն ելից մարդկամբ։
Եւ յետոյ մաժակն՝ վասն տիրա
պետելոյ կայսերացն հռոմայ՝ կո
չեցաւ կեսարիա։ Այսու ժամա
նակաւ հայրն հաւատոյ աբրահամ
ծանօթացաւ մյ։

Արա գեղեցիկն՝ որդի արամայ․
սա պատուեցաւ ՚ի նինոսէ ա՟ւյ և
հայրն իւր արամ։ Իսկ յետ մահ
ուան նինոսի՝ կին նր վաւաշն շա
միրամ կոչեցաւ, զարայն գեղեցիկ
երթալ և առնուլ զնա ՚ի կնութի։
Եւ երբև ոչ կամեցաւ Արայն, յե
տոյ այլ դեսպան ընծայիւք ա-
ռաքէր թէ եկ առ իս և կատարեա
զկամս իմ և դարձիր յերկիր քո։ և

Արքային վասն ոչ հաւանելոյ նմա, ելեալ շամիրամ բազում հեծելօք եկն 'ի պատերազմ 'ի վ՟ր արայի։ Եւ պատուէր ետ զօրաց իւրոց՝ թէ կենդանւոյն կալցեն զարայն։ Եւ իբրև խմբեցաւ մարտն՝ յաղթեցան հայք և անկաւ արայն 'ի մէջ զօրայն և մեռաւ։ Եւ ետ գըտանել զդին նր՟ շամիրամ և զարդարեալ թաղեաց անդ։ Զկարդոսն՝ արայի գեղեցիկ որդին, ընդունել ետ շամիրամ, և առ ինքն պահէր, և վ՟ս սիրոյ հօր նր՟՝ զանուն կարդոսին եդ արայեան արա։ Եւ շամիրամ իւր պարոնի մի հետ նենգ ունելով վասն ապստամբութե՟ նորա, որ նստէր 'ի վան. ել 'ի վ՟ր նր՟ 'ի պատերազմ և յաղթեցաւ և հետևակ փախչէր դէպ 'ի հայս։ Եւ որդին իւր նինուաս, որ է շամէս՝ պահդտեալ եհաս և սատակեցոյց ըզմայրն իւր շամիրամ զվալաշն։

Անուշաւան որդի արայեան ա_
րայի. հանճարեղ և հարուստ
յիրս և 'ի բանս. վերստին էառ ըզ_
մասն աշխարհիս հայոց. այս և ըզ
բովանդակն օգնականութե՟ բարե
կամացն: Զի նինուէաս շատ նեղու
թի հասոյց անուշաւանին վս՟ սիրե
լոյ մօրն իւրոյ զհայրն նորա:
Իսկ յետ սորայիկ չեղև ժառան
գութի հայոց յորդւոց յորդիս:
Այլ ինքնակոչ իշխանք մինն ըզ_
միւսոյ հետ կարգեցան. որք են
այսոքիկ:

Պորետ. Արբակ. Զաւան, Փառ
նակ. Սուր. Առ սորին ժամանա
կաւ յեսու որդի նաւեայ եբեր զիս
րայէլ յերկիրն աւետեաց. որ 'ի քա
նանացւոց ոմանք փախեան 'ի հայս:
յորոց միոյն քանիդաս. յորմէ ազգն
գնդունեաց: Յետ սր:

Հաւանակ. Վաշտակ. Հայկակ,
որ բելշաքուսիւ սպանաւ: Ամբակ.

Առնակ. Շաւարշ. Նորայր. Վս
տամ. Կար. Գոռակ. Հրանդ. Ըն
ձակ. Գղակ. Հօրա. Զարմայր:
Սա՛ օգնական լեալ Բրիամու Թագա
ւորին դրօյիայու, որ յետոյ եսկի
ըստամպօղ կոչեցաւ: Եւ ’իպատե
րազմի հելլենացւոյ զոր հոմերոս
պատմատաղեայ, անկեալ մեռաւ
զարմայր:

Պերճ. սա՛ էր յաւուրս մարգարէ
ին դաւթի արքային իէլի:
Արթուն. Բազուկ. Հոյ. Յու
սակ. Կայպակ. սկայորդի: Առ սա՛
եկին փախստական որդիքն սենե
քերիմայ Թագաւորին ասորեստա
նի. որք սպանին զհայրն իւրեանց
որոյ սատակեցան զօրք ’ի հրեշտա
կէն .ՃՁԵռ. արք ’ի դուռն եհմի
յաւուրս եզեկիայի եւ եսայեայ
մարգարէի:

Պարոյր որդի սկայորդւոյ: սա՛ օգնական
լեալ վարբակայ Թագաւորին մա

րաց , բարձին 'ի միասին զԹագա
ւորուԹին ասորոց որ էր վերջինն
սարդանապալըս:

Հրաչէ որդի Պարոյրայ բոյակ
նադոյն և պայծառատիպ: Առ սո
րա ժամանակում գերեաց Նաբու
գոդոնոսոր զեճմ: և 'ի գերելոյն
հրէից գլխաւոր մի շմբատ անուն
ինդրեաց և էառ՝ և առ ինքն պատ
ւով բնակեցոյց: ուստի յառաջ է
կին ազգն բագրատունեաց: Յետ
հրաչէի առնուն զԹագն, փառնա
ւազ. Պաճոյճ. Կոռնակ. Փաւոս.
Հայկակ. Երուանդ. և սորա որ
դինէ Տիգրան:

Տիգրան՝ ինքն և ժամանակ իւր
ցանկալի. 'ի բազում ազգաց խա
րած էառ: Զգոյնս նուաճեաց.
զաշխարհս ելից խաղաղուԹեամբ.
ինքն գեղեցիկ և արդար 'ի դատաս
տանի: և ուտէլն և ըմպելն չափ
կեշտ: և զհարկատուսն այսպէս

մարդավարութեամբ սովորեցոյց։
Յաւուրս նր Դեղայիք քաղաքա
ցւոց նման եղեն։ և քաղաքացիք
այլ առաւել գեղեցկացան թերպի
էթով, ընչիւք և ապրանօք. ականա
կուռ և ոսկեղէն հագուստով։
Աժդահակ թագաւորն մարաց
նախանձեալ ընդ սա՝ 'ի ձեռն կնոջ
իւրոյ որ էր քոյր տիգրանայ՝ կամէր
նենգել նմա։ Իսկ խոհեմութիւն
տիգրանուհի. ազդեալ տիգրանայ
ել 'ի վեր նր պատերազմաւ։ և ինքն
նորին էհար նիզակաւ 'ի փոր նր և
սպան զաժդահակ, որ 'ի մեր լե
զուս վիշապ թարգմանի։ Սա շի
նեաց զանուանի քաղաքն որ յեզր
տիգրիս գետոյն որ է յամիթ, տի
արպէքիր։ և կոչեաց զնա յանուն
իւր տիգրանակերտ։

Տիգրանայ. դ որդիքէին. Բաբ.
Տիրան. Վահագն. Արաւան։
Եւ յառ աւանայ յորդւոց յորդիս

փոխանորդեցին կարգաւ այսպէս։
Յաւաւանայ · Ներսէհ · 'ի Ներսէ
հէ զորէհ · ուստի ազգն զորէհա
ծանեան։ 'ի զորէհէ · արմոդ։ Յար
մոդայ · բագամ։ 'ի բագամայ ·
վան։ 'ի վանայ · վահէ։ 'ի սորա
ժամանակին եկեալ յունաց տանէ
Աղեկսանդր մակեդոնացի և մար
տնչեալ ընդ նմ, սպանաւ վահէ։
և իշխանութի հայոց ազգին դադա
րեցաւ, ոչ և ամ իշխանութք 'ի հրա
մանս Աղեկսանդրի հնազանդեցան
Յայսմ հետէ մինչև 'ի թագաւորու
թիւնն վաղարշակայ 'ի հայս՝ ոչ
ինչ ունիմ ասել ասէ գիտունն մեր
խորենացին · զի շփոթեալ երկիրն ·
այր զայրամբք ելանէին տիրել աշ
խարհիս մերոյ · վասն այսորիկ դիւ
րամուտ եղև յաշխարհս մեր արշակ
Այս արշակ մեծ՝ թագաւորեցոյց
զեղբայր իւր զվաղարշակն 'ի մծ
աշխարհիս հայոց, զոր յերկրորդ

ճաշանին ցուցանելոց եմք յառաջի կայդ։ Ըստ այս առաջին պատճառանս ազգիս հայկայ՝ ցուցած բղխեալ ՚ի Նոյայ Նահապետէ որդւոյ յաբեթէ։ Ըստ պատմագրիս Մովսէս Թարգմանիչ Խորենացի քերթողահայրն՝ յերիս արս պարծի յիրաւի արժանիս յիշատակութեան. ՚ի Հայկ, ՚ի Արամ, և ՚ի Տիգրան։

*Երկրորդ Հատոր և Գ․ ...ան Թագաւորութեան Ա...ին Ա...։

Յետ մահուանն աղէկսանդրի Թագաւորեաց ՚ի Բաբելոն. Սելևկոս ամս լա։ Անտիոքոս սոտեր՝ ամս. ժթ. Անտիոքոս Թէօս ամս. ժ։ ՚Ի սորա. ժա ամին ապըստամբեցան պարթևք ՚ի մակեդոնացւոյն։ Քանզի Նախ քաջն արշակ ՚ի զաւակէն աբրահամու ՚ի քետու



Гос. Библиотека

րական ծննդոցնէր , որ Թագաւոր
րեաց 'ի պալխ՝ ամս լա։ Եւ ապա
որդի նր արտաշէս ամս իզ։ Եւ
ապա որդի նր Արշակ մեծ՝ ամս
ժգ , որ եկն և սպան զանտիոքոս
Թէօսն։ Եւ զեղբայր իւր Վա
ղարշակ հիւսիսոյ և արևմտեան աշ
խարհիս Թագաւոր կացոյց։ Եւ
յորդւոց յորդիս վասն եղբօրն ար
շակայ կոչեցան արշակունիք։
Վաղարշակ այր քաջ և խոհեմ.
սահմանեաց կարգս արքունա
կան. նախարարական. նահապետա
կան. կողմնակալաց, ազգաց. օճա
խից , ցեղից, սերհատից , գաւա
ռաց , գաւառապետաց։ Եդ անո
ւանս և սահմանս քաղաքաց , շի
նից, տանց, դաստակերտաց, վօրաց
և զօրագլխաց։ Եւ յարքունիս եդ
Թագադիր 'ի բագրատունեաց ցե
ղէ որք յազգէն իսրայէլացւոց խառ
նեցան 'ի հայս։ Եդ և՝ զինակիր,

Ճաշկեր, գինէպան, որք են գնու-
նիք 'ի մջ̃ գինոյ: Ըս̃ արծըռու-
նիք 'ի մջ̃ Թռչնոց: Սպանդունիք
'ի մջ̃ զէնլոց: Սառնապանս, դըռ-
նապանս. և այլ սոյնպիսիս կարգա
ւորեաց: Ըս̃ Թագաւորեաց 'ի
մծբին ամս ԻԲ. և մեռաւ քա
ջապէս:

Արշակ որդի վաղարշակայ՝ ամ
ժգ: Սա նախանձաւոր և հետև
ող լեալ առաքինու Թեան հայրե
նի, քաջու Թբ̃ և նորոգու Թբ̃ յաղ
Թօղն 'ի պատերազմի գերեաց զաղ
գըն պոնտոսի, և յեզր ծովուն պոն
տոսի արձան կանգնեաց: Որոյ
յոյնք Իբրև ա̃յ երկրպագեցին:

Արտաշէս որդի արշակայ՝ Թա
գաւորէ. ամս ԻԵ: Սա յառաջա
դէմ եղեալ, ոչ հաճեցաւ լինել
երկրորդ պարսից. այլ զպարԹևաց
և զպարսից Թագաւորն՝ իւր ն երկ

բորդ արար։ Եւ իբրև ել 'ի պատե
րազմ անհամար զօրօք դիմեալ յա
րևմուտս, զԹագաւորն լիւթայ
ւոց զկիւրսոս ըմբռնեաց, և 'ի տա
պակի եդարկ։ Զպղնձի չոծն յու
նաց աթենացւոց յաշխարհն իւր
եբեր 'ի հայս։ Զբոլոր արևմուտս
եզովկիանոս ծովն հնազանդեցոյց
և ընդ հարկաւ արար։ Դրեալ են
յոյնք և լաթինք զպատմութիւն
սորա գովաբանութբ։ Զոր և ա
ղեկսանդրի նմանեցուցեալ ասեն,
Յաղեկսանդրի զօրայն փոքին ըղ
ձաւապայթս արեգականն արգե
լոյր. բայց յարտաշիսի զօրաց
նետաձգութեանցն միջօրեայ արե
գական մթանայր. այսինքն նետից
շուքն ամպի պէս երևեր յերկինս։
Եւ մինչդեռ 'ի յովկիանոս ծովուն
կային զօրքն իր, չփոթեալ հա
րան ընդ միմեանս և խոցեցին զար
տաշէս. ուր և մեռաւ, թագաւո

ւորեալ ամս ԻԷ։

Տիգրան որդի Արտաշիսի ամս. ԼԳ։ Սա զյունաց զօրսն կոտո րեաց ՚ի պատերազմի, և է անգամ զհռոմայեցին եկեալ զօրսն յաղթեաց Զգաբինայն փախոյց։ Զկրասոս մեռոյց։ Զմիհրդատ կալաւ։ Զսամարիոյ և զէմի հրեայսն գե րի վարեաց։ Զթագաւորն հիւր կանոս գերի եած։ Եւ զանտիգոն թագաւոր կացոյց ՚ի Հրէաստան։

Թագաւորեաց ամս ԼԳ։

Արտաւազդ որդի Տիգրանայ՝ պղերգութեամբ որկրամոլութե̃ կեայր, վասն որոյ սպանաւ ՚ի թըշ նամեաց։ Թագաւորեալ ամս Է։

Արշամ եղբայր Տիգրանայ՝ որ դի Արտաշիսի։ Մանկասպանն Հե րովդէս թագաւոր Հրէաստանի՝ խրոխտաւ կամէր ՚ի վր̃ սորա և յաղ թեցեալ սատակեցաւ։ Իսկ Արշամ

խաղաղական կենօք կեայր. և մե-
ռաւ Թագաւորեալ ամս ի̃:
Աբգար որդի արշամայ՝ ամս լը̃:
'ի սորա երկրորդ ամին հարկեցան
հայք ընդ իշխանութեամբ հռօմայե-
ցւոց: զի ել հրաման յօգոստոս
կայսերէն աշխարհագիր առնել
ընդ ա̃մ տիեզերս ասէ ս̃բ աւե-
տարանն. յորում ամին ծնաւ տ̃րն
մեր Յ̃ս Ք̃ս: Սա աբգար գիր գը-
րեաց առ ք̃ս և ընկալաւ զպատկերն
տէրունական 'ի վ̃ր դաստառակի
ևբժշկեցաւ յախտէն: Սա շինեաց
զուռհա և արար թախտ: Թաթէ-
ոս առաքեալն ք̃սի՝ եկն 'ի հայաս-
տան, և հաւատացեալ աբգար 'ի
տ̃ր՝ մկրտեցաւ տամբք իւրովք:
Կոտորեաց զկուռս և զկռատունս՝
Գրեաց աբգար հռօմայ կայսերն,
և պարսից թագաւորին՝ զհաւա-
տալն իւր 'ի ք̃ս. յորդորելով զն̃ս
'ի նոյն հաւատս. և զհրէայսն չարա

խօսեաց նոցա: Եւ մինչ կամէր կո
տորել զհրեայսն, վախճանեցաւ:

Անան որդի աբգարու՝ Թագա
ւորեաց յեդեսիա. և Սանատրուկ
քուեր որդի աբգարու՝ Թագաւո
րեաց յարևելս ամս Լ: Սա հաւա
տաց 'ի քարոզութիւն առաքելոյն Թա
դէոսի. և դարձեալ եթող զհա
ւատն և սպան զսուրբն Թադէոս, և
զսանդուխտ դուստրն իւր վկայու
հին, որպէս գրեալ կան 'ի ճառս
իւրեանց:

Երուանդ ամս Ի, որ էր յարշա
կունի կնոջէ: Սա սպան զոր
դիսն սանատրկոյ: Շինեաց զվան
և զբագարան և զանտառ անուանոց
վասն որսոյ և զբօսանաց: Եւ սպա
նաւ 'ի զօրացն արտաշիսի:

Արտաշէս որդի սանատրկոյ՝
ամս. խա: Սա սպան զերուանդ և
ինքն Թագաւորեաց: Շինեաց

զարտաշատ քաղաք ուր խառնին
մեծամօր և երասխ. և փոխեաց 'ի
նմա զգեղեցկութին երուանդեայ
քաղաքին: Յաւուրս սր̃ լեռնայ
ին ևդաշտային մարդ՝ անգործ ոչ
գտաւ յաշխարհն մեր: Սա զզօրսն
ալանաց եհար. զորդի արքայի նց̃
ըմբռնեաց. զդուստր արքային եառ
'ի կնութի և մեծ հարսանիս արար:
Ապա և զեղբայր նորին ազատեաց
ևկացոյց թագաւոր պարսից յաթո
ռն հօրն նորին: Եւ երկու անգամ
զզօրսն հռոմայեցւոյ յաղթեալ
հալածեաց յասորեստանս: Եւ
մահն ևթաղումն սր̃ մեծ և չքեղ
և երևելի եղև: Թագաւորեաց
ամս .խա̃:

Արտավազդ որդի Արտաշիսի
յորս ելեալ ևխելագարեալ անկաւ
յերիվարէն 'ի խոր մի և անհետ կո
րեաւ 'իձորն, զի ոչ գտին զդինո
յին. Թագաւորեալ ամս բ̃:

Տիրան որդի Արտաշիսի ամս իա: Սա մտերմութբ կացեալ ընդ Հռօմայեցիս, և խաղաղութբ թագաւորեաց: Սա միայն որոյ և ըզբօսանաց պարպեցաւ 'ի կեանս իւր:

Տիգրան որդի Արտաշիսի՝ թագաւորեաց ամս .խբ. Սա գընաց 'ի Միջերկրեայս 'ի պատերազմ և ըմբռնեցաւ 'ի յունաց: Զոր էթող Լուկիանոս կայսրն և ետ նմա զռափի ազգական իւր 'ի կնութե: Ը̃ իբրև եկն Տիգրան 'ի Հայս էթող զկինն զայն, և 'ի նմանէ ծընեալ զորդին ընդ այլ նախարարութեանս կայուցանէր զի մի անձանեայն արշակունիք:

Վաղարշ որդի Տիգրանայ ամս ի. Սա շինեաց զվաղարշավան 'ի բասէն, և պատէ պարսպաւ զվարդգէս 'ի վե̃ր քասախ գետոյն և անուանեաց վաղարշապատ:

Եւ 'ի պատերազմին խաղլաց ևբաս-
լայ քաջապէս մեռաւ։

Խոսրով որդի վաղարշայ՝ ամս խը։
Սա զհօրն մահուն պահանջե-
լով ընդ վիրէժն՝ գնաց յաղթեաց
հիւսիսայնոցն։ Եւ տապատակեալ
'ի պարս, զթագաւորն արտաշիր
մինչև 'ի հնդիկս փախոյց։ Եւ նշանս
կանգնեաց և դարձաւ 'ի հայս։
Այս եկեալ անակ 'ի պալհաւայ՝ ոմն
թէ անտի փախուցեալ՝ նենգու թ
բարեկամ եղև խոսրովու որ էր ազ-
գական նմին։ Եւ պահ գտեալ 'ի
յորս երկոց սպան զխոսրով։ Եւ
միայն հայք անիշխան ամս ժը։

Տրդատ որդի խոսրովու ամս ծը։
Սա ․ժէ ամի թագաւորութեան
իւրոյ նահատակեաց ընդհուփսի-
մեանսն՝ զձգնազգեաց սուրբ կու-
սանսն, և ածայն նշանք եղեն 'ի
ձեռն սրբոյն Գրիգորի։ Որ իբրև

եւ 'ի բանտէ վիրապին, սկիզբն ա-
բար քարոզութեան, եւ լուսաւոր
վարդապետութ՟ լուսաւորեաց զաշ-
խարհս մեր եւ բժշկեաց զտրդատ
եւ զիշխանսն։ Եւ մկրտելով զամե-
նեսեան յանուն հօր եւ որդւոյ եւ
հոգւոյն սրբոյ, էած զնս՟ 'ի խուրբ
հաւատս քի՟ ։ Եւ 'ի ցուցմանէ
այ՟՝ ետ շինել զսուրբ կաթուղի-
կէն էջմիածնի եւայլ վկայարանին։
զորս հիմնարկեալ շինեցին թագա-
ւորն եւ հաւատացեալ ժողովուրդն
Եւ շատ քաջութբ՟ եւ առաքինութբ՟
եցոյց մեծազօր թագաւորն տր
դատ 'ի հայաստան եւ 'ի հռոմ. մինչ
գնաց 'ի հռոմ առ կայսրն Կոստան
դիանոս եւ դաշնադրութբ՟ հաստա
տեցին անդ սէր մեծ 'ի մէջի իւ-
րեանց, յորդորմամբ սրբոյն Գրի
գորի, եւսրբոյն Սեղբեստրոսի. որ եւ
գրեալ կայ խնդրողացն գիւտ։ Եւ
մեծաւ շքեղութբ՟ դարձան 'ի հայ

աստան Տրդատ եւ սբն Գրիգոր։
Ընդ իշխանքն հայոց դեղամահ ա-
րարին զՏրդատ եւ խաւարեցուցին
զարեգակն իւրեանց։

Խոսրով որդի Տրդատայ։ Սա
փոքր հասակաւ ոչ նմանեալ
հօրն։ Այլ եւ չունէր զքաջու-
թիւն եզբարի յիշատակս արժանի
գրելոյ։ Սակայն զխաղաղութիւն
արար ընդ արքային պարսից Շապ-
հոյ․ թագաւորեաց ամս ․Թ։

Տիգրան որդի Խոսրովու՝ ամս
ժդ։ Սա զքաջութիւն ինչ
ոչ ցուցեալ՝ 'ի բարեպաշտութեց
թուլացեալ։ Ընդ յուլիանոսէ ու-
րացողին երկնչեալ զպիղծ պատ-
կեր նր՝ 'ի տաճարին կանգնեցոյց,
Զոր տեսեալ յուսիկ թոռն սրբոյն
Գրիգորի, ընկէց յերկիր եւ խորտա-
կեաց ոտիւք։ Ընդ վայրացեալ տի-
րան սպան զյուսիկ եւ զդանիէլ քա-

հանայ: Այս շինեալ արքունիս 'ի դվին: Եւ շապուհ կալաւ զտիրան և կուրացոյց զաչսն նորա և անդ մեռաւ:

Արշակ որդի տիրանայ՝ ամս լ: Եւ սա ապստամբելոց և անիրաւանաց ջաղաք շինելոյն, և վասն սպանման գնելոյ եղբօր որդւոյ իւրոյ՝ և առնլոյ զփառանձեմ կին նորա, Անիծաւ 'ի սրբոյն ներսիսէ: Եւ եղև պատերազմ, և պարսիկք գերի կալան զնա, և ինքն զինքն սպան 'ի խուժաստան:

Պապ՝ որդի արշակայ՝ ամս է: 'Ի սորա աւուրս հայք պատերազմեալ ընդ պարսիկս, յաղթեցին նոցա աղօթիւք սրբոյն ներսէսի: Բայց վասն զազրագործութեան իւրոյ պապ՝ յանդիմանեցաւ 'ի սրբոյն Ներսիսէ: Վասն որոյ դժուարեալ ընդ այն պապ՝ մահադեղօք սպան զսուրբն Ներսէս և անիծաւ 'ի նմանէ:

Իսկ կայսրն Թէոդոս եած զպապ ՚ի կոստանդնու պօլիս և սպան զնա։

Վարդգատ՝ ամս դ̃։ Սա մեծահասակ՝ սրտեայ և ուժեղ և կորովլի նետաձգութե̃ք. սմենե հ̃իմբ նմանեալ քաջին տրդատայ։ Զաւխծմն սպան։ Անետով միով զ. ժէ̃ թշնամիս հարեալ վերուստ ՚ի վայր հոսեաց զկնի միմեանց։ Սա զկնի ա̃ազակաց վազեաց ընդ-նեղուցս եփրատայ ի̃ր. կանգնոց չափու։ յորմե զարհուրեալ ա̃ա-զակքն զէն ընկէց լինելով ՚ի ձեռս եկին նորին։ Վասնորոյ արբեալ ՚ի մանկութե̃ն քաջութե̃ իւրոյ՝ ո՛չ հնազանդէր խրատու վե̃ր կացե̃աց. այլ կամեցա̃ զաշխարհս մեր տալ պարսից, թէ տայք շապուհ ըզ-դուստրն իւր ՚ի կնութե̃։ Լուեալ զայս բան կայսրն թէոդոս՝ կալա̃ զնա և ո՛չ էհան յերեսս իւր. այլ ա-ռաքեաց երկաթի կապանօք յաք

սորս 'ի կղզի մի' յովկիանոս ծովու.
և մեռաւ անդ:

Արշակ և վաղարշակ որդիք պա-
պայ թագաւորեցին՝ ամս է: Որոց
մինն հնազանդեցաւ կայսերն յու-
նաց, և միւսն շապհոյ պարսից ար-
քային:

Խոսրով ամս է և 'ի պատերազմին
կալան պարսիկ և եդին յար
գելանս:

Վռամ շապուհ եղբայր Խոսրո-
վու՝ հրամանաւ շապհոյ պարս-
կի եկաց՝ ամս իա: Ազկերտ արքայ
պարսից առաքեաց զորդի իւր շա-
պուհ՝ լինել թագաւոր հայոց. որ
եկաց ամս չորս: Եւ յետոյ անար
գեալ 'ի հայոց՝ դարձաւ առ հայրն
իւր. և եհաս անդ յաւուր մահուան
հօրն իւրոյ ազկերտի. Զոր ըզշա-
պուհ ևս սպանին 'ի նոյն աւուր:

Խոսրով դարձեալ ամ մի խնդրը
հածովք սրբոյն սահակայ հայ

րայետի:

Արտաշէս որդի Վռամշապհոյ եկաց ամս զ̃: Զսա վ̃ն բղջախոհութե̃ իւրոյ ատեցին իշխանքն հայոց և մատնեցին երկրորդ Վռամայ պարսից արքային: և ն̃ստայ անիշխան երկիրս հայոց ամս կ̃: Ե̃ զթոռն սբ̃յն Սահակայ զվարդան եդին ստրատելատ 'ի վ̃ր աշխարհիս հայոց ամս ժե̃: Ե̃ բարձա̃ թագա̃որութի̃ն 'ի ցեղէ արշակունեայ: որք թագաւորեցին ամս, է̃ճձ̃: Ե̃ եղեն այնուհետև ընդ բռամբ պարսից հրապաշտից: Ե̃ երբե̃մն հայք մարզպանք իշխեցին. որք են Վարդ, Մանկոս, և Արշամ:

*Երրորդ Հատոր ևԴասաւորումն Իշխա-
նութեան ևԹագաւորութեան Հայոց։
Որք 'ի հրէից խառնեալք էին յազգս
Հայոց. և նոքէ եղան Բագրատունիք։

Սոքա թագաւորքէին 'ար-
շակունեաց թագաւորացն։
Իսկ 'ի բառնալ թագաւորացն մե-
րոց զիշխանսն մեր, որք գրեցաք
նախ ընդ ձեռամբ պարսից մարզ-
պանք տերեցին Հայոց. և յետոյ 'ի
տաճկաց առնուին զիշխանութիւն
հարկս տալով նոցա մինչև 'ի ժամա-
նակս սոյն կաթողիկոսին։ Եւ ա-
պա 'ի սեռէ բագարատ իշխանին
Աշոտ անուն ոմն առաջին եկաց
իշխան Հայոց ամս. ԺԷ։ Եւ տեղա-
ւորեաց զՀայոց իշխանսն 'ի տեղիս
իւրեանց որ 'ի քաղաքն անի։
Եւ զարդացեալ ճոխացան օրըս

տօրէ յորդւոց յորդիս կարգաւ
այսպէս:

Սմբատ առաջին որդի աշոտոյ, եկաց իշխան ամս ԻԲ: Ընկա լեալ 'ի հօրէն զհամարձակութիւն և առաւել եւս կարգաւորութի, իշխանութի, անուամբ, և չէին
համծուլք:

Աշոտ երկրորդ՝ որդի սմբատայ իշխեաց ամս Է: Սա կոչեցաւ մը սակեր: Ըստ խալիֆայն Ճաֆար որ չինօղնէր պաղտատու, առաքեաց զզօրս իւր և ետ տանել առ ինքն զաշոտ: Ըստ շատ հնարիւք և տան ջանօք ոչ կարաց ուրացուցանել զնա 'ի հաւատոյն քի: Վասնորոյ է բարձ զնա 'ի կենաց վկայական
մահուամբ:

Սմբատ երկրորդ՝ որդի աշոտոյ նահատակին՝ եկաց իշխանաց իշխան ամս ԼԷ: Ըստ Ճաֆարն երկրորդ որ էր զօրապլուխ, կալաւ զսմբատ և

ստիպէր ուրանալ զՔս և տարած
առ խալիֆայն։ Եւ անդ ևս իբրև
ոչ ուրացաւ, յետ բազում դառնա
գոյն տանջանաց փայտ քերեալ և
՚ի նստոյ տեղւոյն ստէպ ստէպ մխէ
ին և հանէին։ Եւ այնպէս խստա
գոյն տանջանօք կատարեցաւ և առ
նանց փառացն արժանացաւ։
Եւ եղաւ ՚ի մկայարանի դանիէլի
մարգարէին ուր ընկեցեալն էր ՚ի
գուբն առիւծուց։ Առ սմ գրեալ
էր զմեկնութիւն սրբոյ աւետարա
նին յօհաննու անուամբ սարկա
ւագն։

Աշոտ երրորդ՝ որդի սմբատայ
նահատակի, իշխեաց ամս ԼԲ։ Եւ
վն առաւել բարի վարուց և աշխրհա
շինութե և խաղաղասիրութե նր
կայսրն յունաց մեծն վասիլ՝ և խա
լիֆայն պաղտատու ուրոյն ուրոյն
թագ առաքեցին նմա. և յերկուց
թագաւորացն պսակեալ ծոխացաւ

և մեծ նա՟ ակատեօք օծա՟ թագա
ւոր հայոց։ Ե՟ հինգ ամ և ՚ի
պատկա՟ որութե՟ն կայեալ, յանանց
թագա՟ որութի՟ն փոխեցա՟։

Սըմբատ արքայ երրորդ՝ որդի
Աշոտոյ արքայի. քան զհայրն
իւր շատ ձոխացա՟. զի էր այր գը
ռուզ և պատերազմօղ։ Իշխեաց աղ
վանից վրաց և պարսից, և հարկսեաւ.
Որոյ սահման իշխանութե՟ն ընդ
արձակեցա՟ պատո՟ով ՚ի խլաթայ
մինչև ՚ի Թիֆլիզ, և յաղո՟անից
մինչ ՚ի ծովն կաղբից. ՚ի տարօնայ
և ՚ի վանայ մինչև ՚ի ծովն կիլանայ։
Ամ. Ժ՟Է մեծ պարոնօք երթայր ՚ի
պատերազմ։ Կայսրն յունաց ռօ
մանոս թագ առաքեաց սմա։ Ե՟
իւսուֆ խալիֆային որ զօրագլուխ
էր. առաքեաց զպատուսէթ ՚ի պարս
և ՚ի հայս հարկահան։ Ե՟ ՚ի պա
հանջել զհարկն, սմբատ յաղթեալ
հալածէց զպատուսէթ զառաջինն։

Ը՟ քվեր որդի սմբատայ գագիկ
որ նստէր իշխան 'ի վան, հանկարակ
սմբատայ թագ եդ 'ի գլուխ իւր
օգնականութ՟ պարսից: և զեղբայր
իւր զգուրգ՝ առաքեաց պարսից շա
հին, որ միաբանութ՟ եկին 'ի վր՟
սմբատայ և յաղթեցան: Ը՟ վասն
երընձակաց խռովութե՟ դարձեալ
զօրաժողով եղէն պարսիկք և վան
ցիք և եկին 'ի վր՟ սմբատայ: և իշ
խանքն հայոց նենգեցին սմբատայ:
և հարկեալ յուղարկեցին առ իւ-
սուֆ շահն: Որ և կախեաց զսըմ
բատ զփայտէ: Ը՟ ա՟իղ նորա
որ կալեէր 'ի մարտիրոսյն, բժշկու՟
առնէր ամ՟ ախտից: Սա իշխեաց
ամս ԻԴ: և մնացին հայք այնու
հետև անիշխան ամս Է:

Աշոտ չորրորդ որդի սմբատայ
նահատակն որ կոչեցաւ երկաթ. իշ
խեաց ամս Ը. հրամանաւ ռոմանո
սի կայսեր հռոմայ որ թագ յու-

Ա զարհեաց սմա։

բաս որդի սմբատայ նահապետ
կի՝ եղբայր աշոտոյ. եկաց իշխան
ամս ԻԴ։ Սա շինեաց զա̃ծաբնակ
տաճարն զկաթուղիկէն ՚ի կարս՝
հրաշազան յօրինուածովք։ Արար
խաղաղութի̃ աշխարհիս հայոց.
զի եբարձ զխռովարար զաւազակսն
և հաստատեցան ուխտք որբուեց
մարինըզաձոր, և կապուտ.քար յար
շակունիս, և հաչակ անուն հռո
մոսին և դպրէ վանք ՚ի շիրակ։

Ա շոտ հինգ երորդ՝ որդի աբա
սայ՝ որ ողորմածն կոչեցաւ և շա
հինշահն. իշխեաց ամս .ԻԵ։ Սա
հաստատեաց զխաչիկ կաթուղի
կոսն յընդհանուրս. վանեալ զմա
հան և զստեփաննոս կաթուղիկո
սունսն, որ զմիջոց աշխարհս լցեալ
էին նզովիւք։ Թագուհին ո̃ր շի
նեաց զհաղպատ և զսանահին զհրա̃
շակերտ վանորայսն։ ՚ի թվին դ̃ ԾԱ։

Սմբատ չորրորդ՝ որդի աշոտոյ որ շահն շահիարմէն կոչեցաւ, իշխեաց ամս ԺԿ̃։ Եւ ՚ի թագաւորելն՝ վերարկեաց պարսպի անոյ քաղաքին բարձրաբերձ բրգունս լայնատարած աշխուք յախուրեան գետոյն մինչև ՚ի ծաղկաձորն կոչեցեալ վայրք։ Եւ հիմնարկեաց ըզպայծառ կաթուղիկեն։ Բայց մահ հասեալ նմա՝ ոչ կարաց կատարել զնա։ Զոր թագուհին նորա կատրամինդէ աւարտեաց զնոյն։

Գագիկ եղբայր սմբատայ որ կոչեցաւ շահն շահ, իշխեաց ամս ԻԹ։ Սա շինեաց զս̃բն Գրիգոր գերահռչակ ՚ի վր̃ ծաղկոցաց ձորոյն նման ս̃բ էջ միածնի։

Սմբատ երրորդ՝ և յոհաննէս որդի գագկայ՝ իշխեաց ամս Ի։ Առ սովաւ յոհաննէս կոչեցան մեկնեաց իշխանացն զարձակումն սահմնի ընդ մեծամեծ նշանացն որ

եղեն 'ի․ռ․ ամին լցեալ 'ի ծննդե
նէն տեառն մերոյ յ̃ի ք̃ի։

Գագիկ որդի Աշոտոյ պարոնի
որդւոյ Գագկայ շահն շահի։

Սա կոչեցաւ խմաստասէր․ ոչ ըղ
փոյթ ունելով զաշխարհակալու
թենէ։ Իսկ իշխանքն հայոց հռօ
մայ թագաւորին պատգամ յուղար
կէին թէ եկեալ առցես զերկիր
մեր։ և ոմանք 'ի պաղտատ առ տա
ճիկս առաքէին զայն բան։ յորում
ժամանակի էր ալփ ասլան խալի
ֆայն․ որ եկեալ յերկիրս հայոց
պաշարեաց զարքայանիստ քաղաքն
անի յամ̃ուրս ի̃է․ զոր էառ և կոտո
րեաց։ Եւ գագիկ փախեաւ․ դ̃ ծ․
արամբք 'ի կոստանդնու պօլիս առ
կայսրն յունաց։ Եւ եղև անդ տը
րամաբանել յունաց ընդ նմա և
յոյժ հռչակեցաւ իմաստութ̃ն նր̃։
Եւ յետ դարձին 'ի հասանիլն 'ի
կեսարիա, զմետրապօլիտն յունաց

մարկոս՝ սպան, ընդ շան նր̅ արկեալ
'ի քրձի։ որ զանուն շանն արմէն
էր եղեալ։ Ըս̃ 'ի կեսարիա յորս և
'ի զբօսանս լինելով, յած̃ուք միում
իշխանք իւր ցրուեալ էին ընդ դա
̃առաւ̃ն. և գագիկ յորսոյ խոնջեալ
և արբեալ քնէր ընդ ծառով միով
մանկամբ իւրով. և յոյ̃ք 'ի վա
ղուց դարանակալ եղեալ սպասէին
նմա։ զոր անդ որսացեալ սպանին
'ի ·չ̃իե· թվին։ Որով սպառեցա̃
գաւ̃աղան իշխանութեան մերոյ 'ի
ցեղէն բագրատունեաց, որք իշխե
ցին յորդւոց յորդիս ամս ·ճ̃· սկզբ
նաւ̃որեալ 'ի թվին ·մժա̃։ Որ այլ
և յայլ պատմութեց ճշգրտեցա̃
այսքան կարճառօտ։ Ըս̃ մանուկն
որ ընդ գագիկ թագաւ̃որին կայր,
փախեա̃ անդէն և փրծա̃ 'ի ձե
ռացն յունաց, և այնէ ռուբէն. որ
յետոյ 'ի կիլիկիայ իշխեաց։ զոր 'ի
չորրորդ հատորի դաւ̃աղանագրոյս

վնա սկիզբն եղաք իշխանացն կիլի
կեցւոց որք ռուբինեանք կոչեցան։

## Չորրորդ Հատոր Դրուագն Իշխանութե Հայոց Կիլիկեցւոց Ռուբինեանց կոչեցելոց. որք Թագաւորեցին 'ի կիլիկեայ։ Սկզբնաւորեալք 'ի Բագրատունեաց Հայոց. ՇԻԷ. Աւարտեալք Տեառն 'ի. ՊԻ.

Ռուբն։

Ռուբէն ազգական գագկայ՝ յետ սպանման գագկայ մինչ զարգացան, ժողովեաց բազորս և եկեալ 'ի սահմանս կիլիկիոյ եառ զկլայն կոսիտ։ Սա տիրելով երկրին, և հասեալ 'ի գեօղն կորմօլօզոյ՝ վախճանեցաւ, կացեալ յիշխանութե ամս Ի։ 'Ի ժամանակս այս՝ ազգն Փռանկաց եկեալ ծովով եկին յոպպէ և առին զէմ. իշխեցրոյ ամս .ղէ։ Ըստ յետոյ 'ի ժամանակս սալահատնի՝ կրկին ա-

ուին զէմ ազգն արապկաց. 'ի Թը
վին փրկչին .ռ.մզ.:

Կոստանդին որդի Ռուբէնի կա
լաւ զաթոռ հօրն իւրոյ Ռու
բէնի: Որ և քաջ և արդարագործ
գոլովն՝ սիրեցաւ 'ի կուսարացւոյն,
տիրելով 'ի վերայ ազգին մասին հայ
ոց: Էառ զվահկայն և զայլ կլայս
ամենս. ընդ արձակելով զերկիրն
իւր 'ի չորս կողմունս. տիրելով
մինչև 'ի ծովեզերս: Եւ յանտիոք
նստեալ կոմսին զքաջութիւ յո
լովս եցոյց: զոր վն արիական գոր
ծոյն մակ անուանեցին մարգիզ:
որ եկաց 'ի կիլիկիայ ամս Է. և վախ
ճանեալ 'ի.շխը. թվին. Թողլով
Է որդիս զԹորոս և զլէոն:

Թորոս որդի Կոստանդեայ բա
րեպաշտ և ողորմած, օրինապահ և
փիլիսոփայ: Էառ զվրէժս 'ի յու
նաց սպանողաց զԹագաւորն գա
գիկ: Եկեղեցիս, վանորայս, և հիւ

բանոյս շինեաց, և ուռճեկս առատա
ցոյց: Էառ և զամրոցս Փռանկաց
և յունաց. և կոչեցաւ բրօդոս սե
վաստոս: Կուարտացէք զյունաց
կուլեկէն 'ի բաց Թողեալ՝ Թորո
սի երկիր անուանեին: Եւ կացեալ
յիշխանութեն ամս .Իդ. վախճա
նեցաւ: Որդի մի մնացեալ սր.
զոր նախանձու աղաղաւ ան յայտ
արարին:

Լեւոն որդի Կոստանդնի և եղ
բայր Թորոսի, էառ զԹարսիս
և զՄամեստիա նահանգաւքն: 'Ի մէ
տանելն սորա զօրօքն 'ի Ճակատ
պատերազմին, բրնձափեքն Փռան
կաց գովեցին զնա՝ քաջ կոչելով:
Սա իշխեաց ամս ԺԵ: Իսկ կայսրն
յունաց բերբերօժէն՝ ընդ ահմետ
ամիրայիւ եկեալ 'ի խաս կալան նեն
գիւ զլեոն՝ Թորոս և ռուբէն. Բ
որդովքն. և տարան 'ի կոստանդը
նու պօլիս: Եւ վասն քաջութեն

ռուբէնի՝ զաշխն կուրայուին։ և
լեռն արգելանս վախճանեցաւ։
Եւ յետ ․է․ ամաց իշխանքն հայոց
դեսպանս առաքեալ առ Թագա
ւորն յունաց խնդրեցին զԹորոս և
ետ նոցա։
Թորոս որդի Լեւոնի եկն ՚ի կոս
տանդնու պօլսէ և նորոգեաց զիշ
խանութիւն հայոց։ Սա յաւելաւ
իշխանութիւն տարսոնի՝ մամեստոյ՝
փռիգիոյ՝ և անարզաբայի․ և սալ
րիոյ կողմանցն զօր եառ ՚ի յունաց։
Եւ լուեալ կայսրն յունաց մանու
էլ, զանդրոնիկէ զօրագլուխն իւր
առաքեաց ծանր զօրօք ՚ի վր Թո
րոսին։ Իսկ Թորոս ելեալ ընդ ա
ռաջ նոցա կոտորեաց զյոյժս և ա
ռեալ զկազմուած բանակին դա
նայր արքական անուամբ։ Եւ ըզ
գերեան ՚ի պատուաւորացն ՚ի վա
ճառ յուղարկեր ՚ի բանակն․ և ըզ
գինս նոցունց իւր զօրացն շնոր

Հերս։ և յոյնք յետս դարձան ամօ
թով։ Եւ լուեալ թագաւորն յու
նաց, և դրդեալ զսուլթանն ղօնի
այու զՂըլըճ ասլանն, եկին 'ի վր̅
Թորոսին պաշարելով զնա 'ի բարձր
կլային. որք պարտեցան ճանճիւ և
մժեխաւ և դարձան յետս։ Իսկ Թո
րոս ելեալ 'ի կլայէն զօրօքն գնաց
և գերեաց զերկիրն ղօնիայու ըդ
մարդ և զանասունս։ և բազում ա
ւարաւ դարձաւ յետս։ Եւ լուեալ
Ղլըճ ասլանն, դաշինս եդ ընդ
Թորոսին և գնաց 'ի ղօնիա։ Էր սա
հանճարեղ ողորմած բարեմիտ և
փիլիսոփայ։ և իշխեաց
ամս ժդ̅։

Մլեհ եղբայր Թորոսի։ 'ի մե
ռանիլն Թորոսի՝ մնայ նր̅ որ
դի մի փոքր ռուբէն անուն։ Եւ
աներն Թորոսի Թումաս պարոն իշ
խեաց ամ մի։ Իսկ եղբայր Թորոսի
Մլեհ՝ որ վասն չարութե իւրոյ

գնացեալ էր առ Նուբարտին սուլ
թանն բերիայի, առեալ զօրս 'ի
նմանէ եկն 'ի սիս: Եւ տեսեալ իշ
խանքն հայոց թէ պատճառ լինի
խռովութե, երդմնեցուցեալ զնա
զի մի' վնասեսցէ մանկանն՝ եդին
զինքն 'ի պահ: Յուսմաս փախեաւ
յանտիոք. և զորդի թորոսին սպա
նին չարաչարոյք ամանք: Իսկ մլ
լեհն խաստասիրտ իշխեաց ամս .է
և սպանաւ 'ի զօրաց իւրոց: Եւ 'ի
մեծ վանքն զոր շինեալ էր յանուն
վկմին, անդր թաղեցին զնա:

Ռուբէն որդի Ստեփանի պարո
նի՝ եղբօր քաջին թորոսի:
Սա բարեգործ և աստուածսէր:
Զոր պատուեալ հռոմայեցիք՝ կին
ետուն նմա յազգէն իմփերատօրի:
իշխեաց ամս .ժբ:

Լեւոն որդի ստեփանի պարոնի՝
եղբօր թորոսի և մլեհի՝ եւեղ
բայր ռուբենի. բերեալ 'ի տարսո

նէ եդին Թագաւոր։ Սա տիրեաց
ազգին իսմայելէ բռնութեամբ և
սավրիոյ՝ կեսարիոյ՝ երեկլոյ՝ ան
տիոքու՝ փայասու, մինչև յատալի
այ։ գնեաց 'ի յունաց պարոնացըղ
բերդս և զամրոցս. շինեաց վանո
րայս աղքատանոցս և գոթանոցս.
և ուռձիկս առատացոյց, սոցա։ Եւ
կերտեաց զԷջմիածին կաթուղի
կէն 'ի սիս։ իմփերաթօրն Ֆռան
կաց և կայսրն յունաց՝ թագ առա
քեցին սմա։ Մականուդին արք է
պիսկոպոսն եկն 'ի պապէն՝ հրամա
նաւ արքային Ֆռանկաց յեգիպտո
սէ և օծին զնա արքայ։ Եւ լուեալ
արքայն կիպրոսի, զգօրըն իւր սպա
սել 'ի կնութիւն ետ սմա։ Եւ
կայսերըն ըստ անուանն առիւծ
առմա առաքեցին սմա. զոր բար
ձեալ 'ի վր̃ դրօշի իւրոյ առաջի
իւր ընթանայր։ Եւ այս նշան դրօ
շի սեփհականեալ մնաց 'ի հայս

մինչ 'ի սպառել թագաւորութեն կիլիկեցւոց: Իսկ առաջին թագաւորքն Հայոց որ 'ի Հիւսիս՝ զարմից նշան կրեին: Կալաւ դաւով զանտիոք. եւ զպէմունդ բրինձն արգել 'ի բերդն սըսոյ, և 'ի տեղի նո՟ր կացոյց բրինձ անտիոքու զռուբէն թոռն եղբօր իւրոյ: Սա բարեբարոյ եւ ողորմած, կացեալ յիշխանութե՟ ամս .ԼԸ: Ի՟ բազում դրուատօք գովեալ վախճանեցաւ 'ի .ռկը՟ թվին:

Փըլիպ փեսայ Լեւոնի, և որդի բրինձին անտիոքու. քանզի լեոնի որդի ոչ գոլոյն, զսա եդին թագաւոր. դրաւեալ երդմամբ զի պահեսցէ զօրէնս հայոց: Ի՟ ընդ ակամբ Հայիցն նո՟ր առ իշխանսն Հայոց, կալան զնա եւ եդին յարգելանս. և սպանաւ 'ի զօրաց իւրոց: Իշխեաց ամս .Գ:

Հեթում որդի Կոստանդին պա

րոնի և ազգական լեռնի: Եւ առ զսա
բէլ դուստրն լեռնի որ էր կին Փիլ
լիպի: զսա օծին թագաւոր Հայոց:
Եւ առ զմարաշ եղպէմնի: Շինեաց
զկաթուղիկէն սբ. սոփի 'ի սիս:
Գնաց առ թաթարն ուխտ սիրոյ
եդեալ ընդ նմա առ 'ի խաղաղու-
թի: և լուեալ Փնտուխտար սուլ-
թանն մսրայ՝ եկն 'ի սիս: և 'ի մար
տին անկաւ որդին Հեթմոյ: զթո
րոս և զլեռն կերի տարան: Եւ Հե
թում դեսպան առաքեալ ընծայ
իւք առ սուլթանն, արձակեցին
պատուով զլեռն: Եւ նորին Հե
թում իշխեալ ամս .ժդ. հրաժա
րեալ յաշխարհէ կրօնաւորեցաւ.
յանձնելով զթագաւորութի իւր
լեռնի որդւոյ իւրոյ:

Լեռն որդի Հեթմոյ: Սա կր
թասէր կոչեցաւ. հաստատեալ
դպրոցս և դասատունս. ստացաւ
գրայարկս. յաղթեաց հանճարովն՝

տրապին՝ քրդին՝ Թուրքմանին՝ և
մողոլցուն: Ը՟ յաւէլ ուխտ սիրոյ
ընդ Թաթարս: 'Ի պարտէզս 'ի ծաղ
կոցս զբօսնեալ ընթերցմամբ գրոց
շատանայր: կացեալ յիշխանութե
ամս .ժը: Սա ողորմած և խնամա
ծու աղքատս, քաջ և արի բարեբա
րոյութեամբ հռչակեալ համ
բաւիւք:

Հեթում որդի Լևոնի գնաց 'ի
պատերազմ ընդ Թաթարան եաւին
զքերիս եգդամասկոս. որև մեծ պա
տերազմ եղև: Ը՟ երկրորդումուաղ
մին .ժը. հազարաւ, յաղթեաս
պատերազմին լեալ ընտրեայց երից
հազարս. և մողոլցիքն .ժ. հազարաւ
ճակատեցան ընդ միմեանս. մողոլ
ցոյն .ԵՃԾ. ի՟ ազատեալ, հայոց
քսան այր մեռան: Ը՟ 'ի փախուստն
սուլթանին անհուսացան Թաթար
քըն: Իսկ Հեթում .դ՟. ա՟ զհետ
անկեալ փոխ առ փոխ 'ի հանդր
ծա 51 վանս

վանս իջանէին մինչ մօտ 'ի մօրր:
Ը՜ երկնչեալ հեթում գուցէ
պարտիցի: և ասէ, շատ է ինձ այս
գործութիս. զի նախնիքն իմ զայս
յաղթութիս ոչ արարին: Ը՜ 'ի տե
ղին զմեծ ծառան սօսի՝ Թրովնը
շանս արար և 'ի բարաւորս դրացն
գերս գրեաց այսպէս: Հեթում
Թագաւոր սըսոյ, մինչ յայս վայր
փախուցց զմսրցին: Ը՜ 'ի դարձին
դայ յէմ. ժէ. աւուրբ կալեալ,
մեծ տօնախմբութիս առնէ: և
դատաւորք էին փախուստ առնէ
ին: Ը՜ եհաս հրաման խաղաղական
'ի խանէն թէ եկեմ շրջագայիւքն
իւրն լիցի: և Հեթում ոչ կամե
լով՝ դ.խ. իջեանն .ժ. աւուրբք
վր դառնայր: Իշխեաց ամս. կ:
Ը՜ ապա կրօնաւորեալ մակար կո
չեցաւ: Աշրաֆ Սուլթանն մըս
րայ՝ եկն 'ի վր հռոմ կլայի. և
քեռին հեթմոյ՝ եւ ընդ դէմ:

Յետ քանից ամաց խսարելոյն`
Թափանին կործանեաց զպարիսպն
և էառ զկլայն: Այս կլոյս ա-
թոռ կաթուղիկոսութե էր. ևզա̃ր
ստեփաննոս կաթուղիկոսն գերի
տարան .Լռ. արամբ: Եւ եղև
մահ սաստիկ 'ի մըր մինչև աղատե
ցին զգերիսն տ̃ր ստեփաննոս կա
թուղիկոսին. տալով նմա պա
շարս ճանապարհի: Այս հեթում
ունէր է եղբարս. այսինքն, Թորոս
Սմբատ. Կոստանդին. Օշին, և
այլ: Եւ երիս քորս. Աբլուն. Ռի
թա. և Թեֆանօ:

Թորոս որդի հեթմոյ` եղբայր
լեոնի եկաց է ամ: Սա յառաջ ա-
ռեալէր զքոյր թագաւորին կիպ
րոսի: Եւ յետոյ կրօնաւորեցաւ,
և լեոն ընկալաւ զթագն 'ի Թորոս
եղբօրէն. և զքոյր իւր զաբլուն
խաթուն` ետ կիպրոսի թագաւո
րին ամարինի: Եւ յորժամ ամա

րին եկն ՚ի կիպրոսէ թագուհեա՟ն
հարսանիս առնել, յայնժամ իշ
խանքն հայոց բռնութ՟ե կրկին
զՀեթում եդին թագաւ՟որ ։ և
զմիւս քոյրն իւրեանց ուիթա խա
թունն՝ ետուն կայսերն յունաց
մանուէլի ՚ի թագուհութիւն ։
Եւ՟ զՍթեփանոս խաթունն՝ առա
քեցին առ կայսրն զի որում և կա
միցի տացէ ։ Եւ՟ յորժամ եկին ՚ի
կայսերէ առնուլ զուիթա, կրկին
էջ յաթոռոյն հեթում և յանձ
նեաց զիշխանութ՟իւն՝ թորոսի ։
Իսկ թորոս և հեթում ետուն ըղ
թայն եղբօրն իւրեանց սմբատայ.
և ինքեանք գնացին ՚ի կոստանդը
նուպօլիս ։ Սա իշխեաց ամս. գ՟ ։
Սմբատ որդի լեւոնի՝ եղբայր
հեթմոյ և թորոսի խնուի՟ ըն
կալեա՟ զթագն յեղբօրէն ։ Եւ՟ թո
րոս և հեթում դարձան ՚ի սիս, ձե
ռնտու՟ութ՟ե թաթարաց զՍմբատ

ընկենուլ, և ինքեանք նստիլ: Եւ
մինչ յայս խորհրդեան կային Թէո
րոս և Հեթում, լուեալ սմբատ
ըմբռնեաց զնս և եդ ՚ի բանտի ու
րոյն: Եւ կամակցութբ իշխանացն
զթորոս խեղդեաց և զՀեթում
կուրացոյց: որ իշխեաց ամս գ:

Կոստանդին որդի լեոնի՝ եղբայր
Թորոսի Հեթմոյ և սմբատայ,
եկեալ ՚ի մէջ սըսոյ: և եկեալ զօրքն
Հայոց ՚ի դաշտն՝ պատերազմեցան
ազգայինք ընդ ազգայինս. եղբայր
ընդ եղբօր: Եւ սուր քարշեալ
ընդդէմ իրերաց յառաւօտին, ոչ
ճանաչելով զմիմեանս՝ բազումք
մեռան: և ըմբռնեալ զՍմբատ եդ
յարգելանս. և գտեալ զՀեթում
առողջացոյց զմի աչն: և ինքն կա
լաւ զիշխանութին. և իշխեաց ամ
մի: Եւ դրդեալ զօրքն Հայոց զՀե
թում, աքսորեցին զկոստանդին և
ինքն կալաւ զիշխանութին: Որոյ

իշխանութիւնն յետ և յառաջ
է. ամ։

Լեւոն որդի Թորոսի՝ իշխեաց ամս գ։ Թաթար միրզէն պիլարղուն անուն՝ նենգիւ ըմբռնեալ սպան զնա։ Եւ եղբայրն Հեթմոյ գնաց առ Թաթարխանն գանկատ։ Եւ մարդ ուղարկեալ պատժեաց շուտով զպիլարղուն և սպան զնա։

Օշին ծիրանածին որդի Լեւոնի գրասէրի՝ փոքր եղբայրն Հեթմոյ. իշխեաց ամս ժգ։

Լեւոն մանուկ որդի Օշնոյ՝ իշխեաց ամս. իա։ Յամի տն. ռ յլը, Թեմուրթաշ Թաթարն եկեալ 'ի սիս. լռ. ձիաւորօք և երեք դաս հետևակօք՝ զումանս կոտորեաց և զոմանս գերի վարեաց։ Շատ ջանաց զդղեակս և զկլայս ինչ առնուլ և ոչ կարաց, և դարձաւ յետս։ Մըւդցին եկն. խռ. ձիաւորօք և

·խռ̃· հեծելակօք · և մեծաւ՟ աշ
խատանօք եկաւ զայս և կործա
նեաց: Եւ՟ լու՟եալ պապն հռոմայ,
Լռ̃· ոսկի յուղարկեաց և առատ ըն
չիւք նորոգեաց, սփոփելով զհայս:
Եւ՟ յետ ·ժզ̃· ամի կրկին եկեալ
մսրցին եկաւ զայս:

Կոստանդին ազգական լեոն Թա
գաւորի՝ որդի պաղտին մարախ
ճատի իշխեաց ամս է:

Դի՟ան հօրքվեր որդի լեոնի:
Սա այլ կոչեցաւ՟· իշխեաց
ամիս:

Կիս՝ հօրքվեր որդի Լեոնի և եղ
բայր Դի՟անի· իշխեաց երկու ամ:
Սորա եղբարք ազգակից գոլով
ֆռանկաց, հայք սպանին
զսոսա:

Լեոն երբ Թագաւոր նստեալ
ժա̃· ամիս: Եւ՟ լու՟եալ սուլթանն
մսրայ, եկն բազում զօրօք, և ըմ
բռնեալ զլեոն մարուն Թագաւու-

հեաւն և տարաւ 'ի մորր, եկորոյս
զլէոն ։ զվանորայս՝ զեկեղեցիս՝
զհիւրանոցս՝ և զմեծամեծ շին
ուածս կործանեաց։ Եւ 'ի պալատս
թագաւորաց եղեալ զտապանակսն
լի ոսկով, և զայլ կահս ոսկեղէնս
և արծաթեղէնս՝ առար առին։
Զշիրիմս թագաւորաց բացին և
զոսկերսն այրեցին, և զախս 'ի հի
մանցն տապալեցին, եբարձաւ թա
գաւորութիւն 'ի տանէն կիլի
կեցւոյ, 'ի պիդ. թվին։
*Կատարումն սորա Գաւազանի
Ազգաբանութեան թագաւորացն
Հայոց։ Համառօտ Ծաղկաքաղ
Արարեալ՝ 'ի բուն Պատմու
թեան Հանեալ։

*Կարճ և Պարզաբանեալ Կայսերացն Հռոմայեցւոց:

*Այսոքիկ են կայսերք Հռոմայեցւոց· Զոր կամեցայ ժողովել մի գրքի միոյն: Պատմելով զսակաւս ի բազմաց զգործս նոցա: Մանաւանդ զմեծամեծս անցից նոցին և արարմանց: համառօտապէս և սուղ ասութբ: Սկսեալ յօգոստոս կայսերէ յորում ժամանակի ծնաւ քս ած մեր ի բեթլեհէմ: գտնելով անտի զթիւ փրկչին: Եւ զմն կենաց և մահու նոցա գրելով: Զորս ի պատմագրացն կարացի գտանել Մինաս վարդապետ Համթեցի:



*Կարգ և Պատճառութիւն Կայսերացն Հռոմայեցւոց: Սկսեալ յՕգոստոս

I Կայսերէ՛:



ԳՈՍՏՈՍ կայսր, Թագաւորեաց ամս. ծզ Սա էր կնամոլ: Կեանքն. հէ ամ: Մեռաւ խուրման համբն 'ի հռոմ: Սա կամեցաւ ա՜ծ կոչել զինքն. բայց յանդիմանեցաւ 'ի սիպիլեայ մարգարէուհոյն: Սա տիրեաց բոլոր աշխարհի: 'Ի սորին. խէ. ամին ծնաւ քս ա՜ծ

'ի բեթլէհէմ: Որ ետես զտեսիլն
յայտնի 'ի պաղեստին յետ երեք
աւուրց ծննդութե՟ պահոց՝ 'ի կա
մարն երկնից աղջիկ մի կոյս. և 'ի
գրկին մանուկ նորածին: և լեալ
ձայն 'իկամարէն երկնից թէ՝ սմա
պարտէ երկնի և երկրի երկիրպա
գանել որ անմահէ. և ո՛չ քեզ որ
մահացուդ ես: Յաւուրս սորա 'ի
պանդոկ փատնողաց՝ աղբիւրն ձէթ
բղխեաց յորդ և առատ յօր ծընըն
դեանն քրի՟ որ յայժմ ջուր բղխէ:
Սա արար աշխարհագիր ընդ ամե
նայն տեղիս ըստ աւետարանին
ղուկասու: Եւ էր յոյժ գեղեցիկ
անձամբ և երեսօք:

2 Տիբերոս Թագաւորեալ ամս
·իգ՟, յամի տեառն.ժդ՟:
Էր սա յասկոտ խիստ: Կեանքն
·ձը՟ ամ: Յանկարծամահ մեռաւ
'ի ճանապարհին: Սա էր փեսայ
օգոստիանի, և էր բարեբախտ և

խոհեմ։ Յաւուրս սր̃ յէմ յհննս̃
մկրտչին գլխատին, ևքս̃ ա̃ծ մեր խ̃չի։
Սա զպիղատոս սպանանէ. և զհե
րովդէս ընդ հերովդիայ կնոջ իւ֊
րում տարեալ ՚ի հռոմ յաքսորս ա֊
ւաքէ ՚ի լէօն քաղաք եանդ սա
տակին յետ չարչարանացն քս̃ի
հինգ ամ։

3 Գայիոս եղբօր որդի տիբերո
սի կայսեր, Թագաւորեաց
ամս.դ̃, ամիս .ը̃. յամի տեառն
լէ։ Գայիոս որ է գալլօս, խօսօղ
Թարքմանի որէ խօսօղ։ Սա յոյժ
վավաշոտէր. մինչ զի զքերկու քորսն
իմիասին կալաւ իւրն կին։ Ե̃
այլ մեծ չարիս գործեալ, ատե
ցեալ եղև յա̃մ հռոմայեցւոց. և
յարեան ՚ի վե̃ր նր̃ զօրքն և սպանին
զնա ՚ի մէջ պալատանն իւրոյ։

4 Կղօդիոս սկսաւ յամի տեառն
.խ։ Թագաւորեաց ամս .ժդ̃։
վս̃ սորին կնոջն պատմի ՚ի յունաց

Թէ՝ պատրոնիկէ Թագուհին, կին էր կղօդիայ. որ գնաց յէմ յաւուրս տեառն եղբօրն. և եգիտ զխաչն Քի: Ո̃ր էր կին մի այլ յոյժ այրամոլ. և վ̃ն այն գործոյն սպան զնա:
Ըն̃ էր կղօդիոս յոյժ որկրամոլ և արբեցող. վ̃ն այն հրաման կարգէց ա̃մ մարդկան անպատկառ և անամօթ ձգուտալ և փուչ հանել թէ 'ի փողոցս և թէ 'ի սեղանի: Վ̃ան զի ասէր թէ՝ բազումք մեռան որք զայս առնել ամաչեցին: Յաւուրս ո̃ր եղև սով ընդ ա̃մ երկիր զոր մարգարէացաւ ագաբոս. (Գործոց II. 28:) Յայնժմ ժամանակի և ո̃ք առաքելոյն պետրոս 'ի հռօմ գնաց և. իե. ամ անդ եկաց:
5 Ներոն սկսաւ յամի տ̃ն. ծը: ինքնակալելոյ ամս. ժդ. և ամիս է̃: Սա էր յոյժ պղծնասէր և եշխի եայ: Սա զմի շորն է̃ անդա մ'ռչ զգեցաւ. և զպատնամանն 'ի պատուա

կան ականց և մարգարէն ազդանէր:
և միշտ 'ի ճգնորութեն շրջէր:
Ը՜ ուր նստէր՝ ա՜ աչէր և ձայնս
՜որս եղանակէր 'ի մէջ պատո՜ա
կանաց և նո՜աստից: Սա առաջեաց
զպէսպիսանս զօրօք 'ի վր՜ էմ:
Սա սպան զմայրն իւր և զեղբայրն,
և զսեննեքա վարդապետն իւր զի
աշակերտեցա՜ առաքելոյն: Սա ըս
պան զն՜ր առաքեալն: Սա շինեաց
ապարանս բազմածախս 'ի յոսկոյ
և յարծաթոյ 'ի փղոսկրէից և յա
պանօսից: Սա արար զառաջին հա
լածումն քրիստոնէից: Սա մինա
ծեաց թէ՝ եթէ քաղաքս հռոմ
հրդեհէր, որքան մեծամեծ բոցս
արձակէր. և հրամայեաց հուր հա
րուլ և երեք օր այրեցա՜: Ինա ե
լեալ 'ի բարձր աշտարակին ծափս
տայր և ծիծաղէր: Զոր զայրա
ցեալ հռօմայեցւոց դիմեցին 'ի վր՜
նր զի կալցեն զնա և նա փախեա՜:

Ը՟ 'ի Թագչին 'ի պարտիզի մուտ
ինքն զինքն եսպան դանակով:
Ը՟ այլք ասեն թէ՝ պարտիզպանն
եսպան: Յա՟ւուրս սորա թագա
՟ւորութե՟. զ՟ ամ՟ն՝ հրեայքն յէմ
սպանին; զտ՟ն եղբայրն յակոբոս.
որ՟ պատմի 'ի պրակում առաքելոցն
սբց. (12.2:) Սա հերձեայ ասեն
զարգանտ մօր իւրոյ ասելով՝ տե
սից թէ յո՞ր տեղի բնակեալ եմ. թ.
ամիս. որ և ասեն այնու մեռա՟
մայրն ն՟ր: Սա եկուլ գորտ մի եգ
և մնոյց զնա կաթամբ 'իփորն իւր.
և գորտն բազում ձագս արար և
ըմպեալ չերպէթ զամէնն թափէց
յիւրմէն կենդանիս: Սա շինեայ
զգօլօմն 'ի հռոմ բոլոր 'ի բարձրու
թիւննս .ճէ. ոտնաչափ որ երևի
մինչ ցայժմ:

6 Վալլօս սկսա՟ ամի տեառն. հ՟ն
թագաւ՟որել ամիսս .է. և ա՟
՟ւուրս Ե: Էր սա յոյժ խոնարհ. որ

և ամենեցուն զիջաներ և գիրկս առ
կեալ համբուրէր։ և առ ինքն ձը
գեր։ ՚ի մէջ հրապարակին բոպա
նաւ անարի գոլով։ Կեանքն ո՛չ գոյ
յայտնի։

7 Օթօն թագաւորեաց ամս .ե.
ամիսս .Է։ Էր սա՛ պատերազ
մասէր։ Կեանքն ո՛չ գոյ յայտնի։
Ինքն զինքն եսպան ՚ի պատե
րազմի։

8 Վիտելլիոս սկսաւ յամի Տն՛
.հէ։ Թագաւորեաց ամիսս
.ը։ Սա՛ էր բղջախոհ յոյժ։ Զոր
լորով խեղդեցին ժողովուրդքն ՚ի
հռոմ. վասն զի շռայլէր։ Կեանքն
ո՛չ գոյ յայտնի։

9 Վեսպիանոս ըսկըսաւ յամի
Տն՛ .հէ։ Ինքնակալեաց
ամս .թ, և ամիսս .ժ։ Սա՛ էր այր
բարի։ Սա՛ ՚ի զօրականութե՛ն իւ
րում բազում պատերազմունս մը
ղեաց և յամի յաղթօղ գտաւ եղա

նազան պատուաւս հնազանդեցոյց հռ
ռօմայեցւոց: Սա առաքեցաւ ՚ի
ներոնէ ՚ի վր՟ հրէաստանի և պա
ղեստինոյ առ ՚ի հնազանդեցուցա
նել զապստամբեալ հրէայսն որք
հակառակեցան հրամանաց կայսե
րական հարկացն: Արդ մինչերն ՚ի
պաղեստին պաշարեալ զօրօք զե՟մ,
անդ ՚ի զօրացն թագաւոր պարոն է
ղև եղեալ, և ինքնակալ կոչեալ:
Սա կալաւ զյովսեփոս հրէայ և
պահեաց ՚ի կապանս. ևնա մարգա
րէացաւ թէ թագաւորելոց ես վես
պիանէ: Եւ իբրև թագաւորեաց,
եկն ՚ի հռօմ. և զյովսեփոս արձա
կեաց և պահէր պատուով: Եւ փո
րացաւութբ՟ մեռաւ ՚ի վր՟ ոտիցն.
ասելով՝ ո՞չ է պարտ արքայի ըն
կողմանիլ:

10 Տիտոս սկսաւ յամի տն՟ ՀԷ.
ինքնակալեաց ամս բ՟: Սա որդի
էր վեսպիանոսի: Սա մինչ պաշա

րեալ ունէր զէմ, ինքնակալ եղաւ
քանզի լուան զմահ հօրն իւր զօրքն,
և թագաւորեցուցին զնա: Սա էր
լի ամ իմաստութբ և բարի առա
ւել քան զհայրն իւր: Սա իբրև
թագաւորեաց` զօրականացն իւ-
րոյ պատուիրեաց մի՛ զի ինքնակա
լեալ է սարսեսցին ՚ի նմանէ: Սա
տիտոս զէմ զոր հայրն իւր ՚ի նեղ ար
կեալ էր և պաշարեալ` էառ զնա կը
րակով. քանզի նափթեցին զծայրն
նետին և կրակեցին և լցին ՚ի քա
ղաքն որ այրեցաւ: Նա և քակեաց
զտաճարն, և տարաւ ՚ի հռոմ զհը
րէայսն բնաշխինջ արարեալ անտի:
Սա բազումն աղաչեաց զհրէայսն
հնազանդիլ նմա և ծնալ աշխար
հով և քաղաքով և տաճարաւն յիշ
խանութե իւր: Ամենայն պաշա
րուեմն` թէ վէսպիանոսի և թէ
իւրն` եկաց ամս .Իգ: Սա մեռաւ
՚ի չափ այրականն և թաղեցաւ մերձ

հօր խուրում և կոծ մեծ եթող հը
ռօմայեցւոյն։

II Դօմետիանոս որդի վեսպիանո
սի և եղբայր տիտոսի՝ սկսա՛
յամի տեառն .ձթ. ինքնակալեալ
ամս. ժգ՟։ Սա ոչ ինչ գործ արու
թե եբեր յանձն իւր. ոչ զհօրն և
ոչ զեղբօրն . և զբաղումս սպան
՚իմէնադուրութեան. և զա՟մ ծանօթսն
իւր։ Քանզի գիտէին զայսն և
զպակասութի՟ նորա։ Սա երկրորդ
հալածումն արար քրիստոնէից։
Սա լուա՛ զյոհաննու աւե՛տա
րանչէ և յղեաց յեփեսոս եբեր զնա
և եդ յեռս ձիթոյ։ Եւ՟ իբրև ել
անվնաս, աքսորեաց զնա ՚իպատմոս։
Սա զինքն կրկին ա՟ծ կոչել ետ.
այսինքն ա՟ծ ա՟ծ։ Սա ետ սպանա
նել զս՟բն դիոնեսիոս ընկերօք իւ
րովք ՚ի փարէզ քաղաքի. և բազում
չարիս գործեաց։ Զոր տաղտկա
ցեալ հռօմայեցւոյն սպանին զնա

յիւրում պալատին 'ի. ԼԶ. ամի հա
սակի իւրոյ:

12 Ներուաս սկսաւ յամի տն
.ՃԲ. Թագաւորեաց տարի մի և դ
ամիս: Սա զոր ինչ դօմետիանոս
արարեալ էր և սահմանադրեալ,
յետս ջրեաց զամ: ուստի և զսբ
աւետարանիչն յոհաննէս դարձոյց
յաքսորանայն պատմոսի և առաքեաց
յեփեսոս. ուր գրեաց զաւետա
րանն քսի այ մերոյ:

13 Տրայիանոս սկսաւ յամի տն
.ՃԴ. ինքնակալէլ ամս. ԺԹ
Սա 'ի հարձէ սպանիացւոյ ծնեալ.
և յիտալիայ իշխանայն ագրիպեայ
և չելլոնի ինքնակալ եղեալ: Սա ըզ
կնի օգոստոսի զիշխանութին հը
ռոմայ աճեցոյց մինչև 'ի բաբելօն
և 'ի հնդիկս. և 'ի ծովն կարմիր
նաւս եդ: Սա մինչ գայր յեգիպտո
սէ յանտիոք, կալաւ զիգնատիոս
ածազգեայն և եբեր 'ի հռոմ:

Եթ̃ ծ̃րն միշտ յիշէր զանուննն քս̃ի.
և զինուորքն ասէն ցծ̃րն մինչև
յերբ յիշես զանուննն քս̃ի, և նա
ասէ, 'ի վե̃ր սրտի իմոյ գրեալ կայ
վասն այն ոչ կարեմ մոռանալ զնա։
Զոր երբև հանին կենդանւոյն ըղ
սիրտն, տեսին գրեալ 'ի նմա ոսկի
գրով զանուննն քս̃ի։ Եթ̃ ապա որ
կին զնա առաջի առիւծուց և խո
կոյն հեղձուցին զնա։ Բելլինոս
Փիլիսոփոսն գրեաց տրիանոսի ոչ
ներել զքրիստոնեայսն։ Զայս տը
րայիանոսէ պատմեն թէ՝ Դրիգո
րիոս ծ̃բ հայրապետն հռոմայ.
տեսեալ զսքանչելի գործսն զոր չի
նեաց տրայիանոս կռապաշտն արքայն
զկամարակապ կամուրջսն 'ի վե̃ր մե
ծամեծ ևանհուն գետոյն եղբալը
բանկապան 'ի ձորս 'ի բազմամուռ
և 'ի տղմային տեղիսն ձանձապար
հաց։ Զարմանայր յոյժ Հայրա
պետն գրիգոր և հայցեր յա̃յ նե

բուռն տրայիանոսի և ասէր թէ ա-
ւանց կամաց ա̄յ մարդ այսպիսի
անպատմելի գործս ոչ կարէ առ-
նել: Երբ 'ի բազում ժամանակս
հայցէր յոյժ արտասուօք զփրկու-
թիւն տրայիանոսի. և եկեալ առնա
հրեշտակ տեառն ասաց, վ̄ն աղօթից
քոց շնորհեաց ա̄ծ ներումն տրայի-
անոսի. այլ վ̄ն կռապաշտ մարդոյ
մի' աղաչէր զա̄ծ զի այլ ոչ լսէ
քեզ:

14 Անդրիաս սկսաւ յամի տ̄ն
.ճժբ. ինքնակալեաց ամս ի̄ա: Սա
եղբօր որդի էր տրայիանոսի, բայց
ոչ համեմատ նմին: Յաւուրս ս̄ր
հրէայքն որ յէտ տիտոսի ժողովե-
ցան յէմ, դարձեալ ապստամբեցան
'ի հռոմայեցւոց: Երբ սորա գըն-
ցեալ յէմ կոտորեաց զն̄ս. և զմնա-
ցեալսն ցրուեաց ընդ ա̄մ աշխարհ.
և զքաղաքն ս̄բ՝ պարսպեաց որ 'ի
տիտոսէ աւերեալ էր: Եւ հռոմայ

եաց քրիստոնէից բնակիլ անդ և ոչ հրէից: Բայց պղծողութեան զտեղի չարչարանացն քո̅ի որ յառաջ արտա քոյ քաղաքին պարտէզէր, սա՛ 'ի միջ քաղաքին է առ որ̅ և է այժմ. և կո չեաց զքաղաքն յանուն իւր հելի ոսալէմ մականուանաբար. քանզի և իւր անուանն հելիոսանդրիանէ էր: Եւ նոմոս գրեաց ոչ նեղել զքրիստոսակրօն հաւատացեալսն: Յաւուրս սորա կարգեցան յեկե ղեցին քրիստոսի ժամ, պատարագ, պաքն և կարգ եկեղեցականք:

Սմ ջրգողեալ ցաւօք մե ռանի:

15 Անտոնինոս առաջին՝ սկսաւ յամի տեառն .ճծդ: ինքնակալեալ ամս. իբ. և ամիսս երեք: Կոչեցաւ սա փիուս որ է գթած: Եւ վասն այն կոչեցաւ գթած, զի ոչ դար ձոյց զերեսս յումեքէ խնդրողաց ինչ 'ի նմանէ: Սա էր փեսայ անդ

րիանոսի կայսեր: Սա՛ հրամայեաց
մի նեղել զաշխարհ վասն հարկի.
այլ չափաւ̃որապէս առնուլ: Սա՛
պարսպեաց զռոդոս քաղաքն զոր
յառաջն կօլօսիա կոչէին որ է
պատկեր միաձոյլ. զոր եդեալ էր
'ի վր̃ Է̃ պրջոցն. զոր յետոյ մավին
քակեաց. և եբարձ զայն. դ̃ռ̃. բեռն
պղինձ: Վ̃ս̃ կռոյն կոչէին զկըղ
զին կօլօսիա. առ որ պօղոս գրեաց
զթուղթն կողոսացւոց: Ըս̃ ունի
անդրիանոս գրեալ երէք բանս խրա
տական, վ̃ս̃ անպիտան մարդոյ որ է
այս, մարդ որ լինի 'ի ճաշս պա
րարտ, 'ի կեանս փափուկ, `ի զգեստ
տըս անձնեալ, այնպիսին ո՛չ գիտէ
թէ աշխարհս ինչ է: Մեռաւ̃ 'ի
գեօղն իւր օրդա̃իլ. հեռի 'ի հռ
ոմայ. ժ̃է̃. միլ. և բերեալ թաղե
ցին զնա 'ի հռոմ փառօք: Սա՛ ոռ̃
քրիստոնեայ էր, բայց ոչ լիապէս:
Ըս̃ ոմանք ասեն թէ՝ գնաց 'ի պարս

'ի պատերազմ և պխսակոտ եղեալ
մեռաւ և թաղեցաւ 'ի խաւան մերձ
յուռհա:

16 Մարկոս անտոնինոս սկսաւ
յամի տեառն. ՃԿԵ. ընդ եղ
բօր իւրում՝ օրեղիանոսի ինքնակա
լեալ ամս. ԺԶ: Սա յոյժ ունելով
կեանս հանդարտ, էր գիտակ յոյժ
յոյն և լատին իմաստութեց: Սա
ողորմած գոլով ոչ առնոյր հարկս
յաշխարհէ: Եւ 'ի սաստկանալ պա
տերազմին որ շրջակայ իւրն կային,
հքաւորեցաւ. և զամ որ ինչ գը
տաւ 'ի տան նր անօթք, նաև 'ի մր
թագուհոյն, ծախեաց և զօրաց առ
ձիկ ետ: Եւ յետ յաղթութեց ոչ
բնաւ առացաւ զայն. վասնորոյ կո
չեցաւ ողորմած: Սա մարկոս՝ բա
րի գոլով, դրդեալ բռնադատու
յիւրոցն, յարոյց զերրորդ հալա
ծումն քրիստոնէից. որ և մարտիրո
սացան սրբն պօղիկարպոս և այլ

բաղում վկայք: Սա մեռաւ 'ի
յունկարիայ և բերեալ 'ի հռօմ
Թաղեցաւ:
17 Կոմետոս ավրելիանոս որ է
օրեղիանոս, սկսաւ յամի տն
.ճձբ. ինքնակալեաց ամս.ժգ. և
էր բղջախոհ: Սա մեռաւ և թաղե
ցաւ յապարանս իւր 'ի հռոմ. քան
զի դեղ մահու արբու ցին նմա և
գտին զնա մեռեալ:
18 Պերտինաքոս սկսաւ յամի տն
.ճղգ. ինքնակալեաց ամիս
գ: Էր սա արդարադատ: Մեռաւ
ծերացեալ, բայց սպանմամբ. զի
ամբոխ քաղաքին կուտեալ 'ի վերա
նր սպանին զնա:
19 Սեւերոս սկսաւ յամի տեառն
.ճղգ. ինքնակալեաց ամս
.ժէ: Ըն էր ափրիկեցի և գիտուն
յոյժ: Սա էր յառաջին ճարտասան
դատաստանաց. և մի զմիոյ զկնի
փոխեալ գործածարուք եւ յինք

նակալութիս ։ Ըս էր պատերազ
մօղ ։ Այս յարոյց զչորրորդ հալա
ծումն 'ի վր̃ քրիստոնէից ։ Ըս մե
ռաւ մինչ 'ի պատերազմին ունկա
րիոյ էր ։

20 Անտոնինոս երկրորդ՝ սկսաւ
յամի տեառն . մժը̃ . ինքնակալեաց
ամս է . բղջախոհ և չար յոյժ ։
'ի ժամանակս սորա գտեալ եղև
յերէքումն գիրք որ ոչ երևիւր թէ
ռումէր յարմարեալ . սակայն զանա
զան և պիտանի խոհեմ բանք կայ
ին 'ի նոսա ։ Այս 'ի պատերազմ գը
նացեալ մեռաւ մերձ 'ի
ուրհա ։

21 Մաքսիմոս սկսաւ յամի տն
. մլե̃ . ինքնակալեաց ամիս ։
Այս անարի գոլով՝ վս նախանձու
'ի զօրաց իւրոց գլխատեցաւ . և
ոմանք ասեն թէ յորդւոյն իւրմէ
նախանձու սպանաւ ։

22 Անտոնինոս երրորդ սկսաւ

յամի տեառն. ՄԺԱ: Ինքնակալեալ
ամս երեք. աղտեղի և զազիր:
'ի սորին ժամանակն յայտնեցաւ
հերձուածողն սաբէլլիոս: Սա ան
տոնինոս ամբոխմամբ զօրաց իւրոց
ըսպանաւ ընդ մօր իւրոյ:
23 Աղէկսանդրոս նստաւ յամի
տեառն. ՄԻԴ. ինքնակալեալ
ամս. ԺԳ: և օգոստոս կոչեցաւ:
Էր սա գաղանաբարոյ յոյժ և հերձ
ուածող: Սա զքր̃ պապն զկալիքս
թոս վս̃ ուղղափառ հաւատոյն ըս
պան: 'ի սորին ժամանակն փայլէ
վարդապետն որոգինէս: սա աղէկ
սանդրոս սպանաւ 'ի մոքնետիաքոս
տեղին:
24 Գորտիանոս նստաւ յամի տեառն
. ՄԼԷ. ինքնակալեաց ամս
Զ: Գնաց զօրօք 'ի պարս և իբրև
յաղթութի̃ գայր, սպանաւ 'ի ֆի
լիպոսէ իշխանէ դաւոյ: Ըստ ոմանց
խեղդեաց ասեն զինքն յափրիկէ:

Սա՛ յաղթեաց բաղում քաղաքաց
և աշխարհաց։

25 Մաքսիմիանոս սկսաւ յամի
տն ․մպդ․ ինքնակալեաց
ամս ․գ․ ։ հալածիչ եկեղեցւոյ։
Զսմանէ ասեն ․խ․ լէպրա մեծ ու
տեր ․ և մետրէ մի գինի ըմպէր ․
և ․ռ․ քսեստ քրտունք հոսէր 'ի նը
մանէ յօրն։ Սա՛ գնդցեալ 'ի վր̃ բօ
լոնեանց։ և երբև դարձաւ յաղթա
հարութբ̃, սպանաւ 'ի զօրաց իւ
րոց 'ի թէնէծնծիայ քաղաք ակուլէոյ,
յերիտասարդական հա
սակի։

26 Փիլիպպոս առաջին 'սկսաւ
յամի տեառն ․մխդ․ ինք
նակալեաց ընդ որդւոյ իւրում փի
լիպոսի ամս ․ր․ ամիսս ․ր․ ։ Սա՛ ա
ռաջին եղև ինքնակալ քրիստոնեայ
մկրտեցաւ 'ի պետրոսէ պոնտացւոյ
մարտիրոսէ ․ հաստատեալ 'ի Փապի
անոսէ պապէ։ Եւ մկրտել և զոր

դին իւր եղեն երկոքին ընտիր . քր
իստոնեայք։ Եւ դրոշմամբ դեկո
սի որ զկնի սոյին՝ սպանեին զհայրն
՚ի հռոմ և զորդին ՚ի վիրիուն քա
ղաքի ՚ի սոյին ժամանակս լցեալ
հազար ամ շինմանն հռ
ոմայ։
27 Դեկոս սկսաւ յամի տեառն
․մծ․ ինքնակալեաց ամս
բ․ ազգաւ բարբարոս ժանտ և
ատեցող աղքատաց։ սա զ․ր․ եր
բորդ հալածումն յարոյց ՚ի վերա
քրիստոնէից։ ՚ի ժամանակս որ բա
զումք կատարեցան վկայութբ։
՚ի սմանէ խուովեցաւ սուրբն ը
բենգիոս։ ՚ի սմանէ փախեցան յայ
րին որ մանկունքն եփեսոսի։ Սա
եր կռապաշտ․ սպանաւ ՚ի ցեղակ
ցաց իւրոց։
28 Գալոս սկսաւ յամի տեառն
․մծդ․ ինքնակալեաց ամս․
բ․ այր չար։ Սա ՚ի կլեմիոյ պա

ճառն փոքր կապեալ շար մահո_
ճամբ մեռաւ ։

29 Վաղերիանոս սկսաւ յամի
տեառն . մծը . ինքնակա
լեալ ընդ վաղեսի ամս ժե ։ Սա
գնաց յեմ և յայլ աշխարհ 'ի պա
տերազմ և 'ի պարս . և ըմբռնեալ սա
փիւռոս եդ զնա որբօղ աղբեց մին
չև 'ի մահ ։ 'Ի ժամանակ մարտիրոսա
ցան սբքն կիպրիանոս , և պապ.քն
հռոմայ մարցելլոս և լուցիոս ։ Իսկ
կալլենոս որդին վաղերիոսի ինքնա
կալեալ 'ի սկիզբն բարի , և յետոյ
եղև չար ։ Ը՟ օրեղիանոս տուկն
սպան զնա յարտաքնոցն նիղակաւ
և աղէքն հեղեալ սատակեցաւ ։
Յայսմ ժամանակի սբն պօղոս ա_
ռաջին անապատաւորն գնաց յանա
պատ .

30 Կլօտոս երկրդ սկսաւ յամի տն .
մհբ . ինքնակալեալ ամս . բ .
Եռմանք բ ամիս ասեն . ընդ հայ

ումս կղզւոս ասի սմ՛։ զկզւիա
զլերիկա զմակեդոնիա յաղթեալ
ա՟ներեայ։ Նա՛ նաւամանաց յաղ
թեաց և բնական հի՟անդութբ
մեռա՟ անզա՟ակ։

31 Օրեղիանոս սկսա՟ յամի տ՟ն
.մհբ.։ ինքնակալեաց ամս է։
այր խոհեմ և պատերազմօղ։ հինգ
անգամ զգոդացիս կոտորեալ յաղ
թեաց։ Սա՛ առաջին եդ 'ի գլու
խ իւր թագ կայսերական։ զոր այժմ
յա՟ուր ձեռնադրութե սովոր է
դնել փափն։ 'ի սմանէ մնաց թագ
դնել թագա՟որին։ Սա՛ նորոգեաց
զպարիսպ քաղաքին հռոմայ։ Սա՛
շինեաց 'ի հռոմ զտաճար արեգա
կանն անչափ ակամբ և մեծածախ
զարդուք։ Սա՛ ուսոյց մարդկան
ուտել զմիս խոզի։ Սա և էհան
հալածանս քրիստոնէից։ Սա՛ հա
րա՟ 'ի կայծակէ ապականեալ մար
մնոյն բայց ոչ սատակեցա՟։ Սա՛

վս̃ գոռոզութե̃ սպանաւ յիւրայ
նոյն և թաղեցաւ յուրբն հռոմայ.
զոր և պատուեցին արժանօք ըստ
հնոյն քաջաց:
32 Տեկիտոս որ է տացիտոս՛ սկսաւ
յամի տեառն .մհե. ինքնա
կալեալ ամիս .զ̃: Սա այր քաջ
բայց յոյժ ամբարիշտ. այլ ոչ ժա
մանեաց չար առնել. և յանկարծա
մահ սատակեցաւ:
33 Պրօբոս սկսաւ յամի տեառն
.մհզ. ինքնակալեալ ամս
.զ̃: Սա ազգաւ պաոնիկ այր հը
մուտ պատերազմաց, բազում յի
շատակս չարս եթող իւրոց հետա
գայից: սա մինչ որդւով իւրով
անցանէր զօրօք ընդ գետն, խեղ
դեցաւ մերձ 'ի սերիա: յաւուրս
սորա յայտնեցաւ հերձուածն
մանիքեի:
34 Կարինանոս սկսաւ յամի տն̃
.մձբ̃. ինքնակալեալ ամս

երկու: արժանի յիշատակի ինչ ո՛չ
արար: Եւ՛ 'ի դարձ պատերազմին
մեռաւ 'ի ճանապարհին ոմանք ա
սեն է ամ թագաւորեալ:

35 Կարոս սկսաւ յամի տեառն
.ՄՃԷ. ինքնակալեալ ամս. բ
ընդ կարինոսի և Նումերոսի: Սա
չար և ժանտ: Սա 'ի փոքր գետ
խեղդեցաւ և զերկու որդիսն ստով
սպանին:

36 Դեոկղետիանոս սկսաւ յամի
տեառն .ՄՃԷ. ընդ մաքսի
միանոսի ինքնակալեալ ամս ի:
Մաքսիմիանոս կայսր գոլով առա
քեցաւ դեոկղետիանոս որ պոռնկոր
դիներ 'ի գաղղիեայ ընդդեմ թըշ
նամեաց նոցա: Եւ երբեւ դարձաւ
յաղթութբ, աթոռակից և ինքնա
կալ մաքսիմիանոսի եղաւ 'ի սինկ
ղիտոսեն: Սա դեոկղետիանոսնախ
զգեստ ակամբք և մարգարտովք սոսկ
րեւ առաք զգենուլ: Յաւուրս սոց

յարեաՃ չար և դժնդակ հալա
ծումն 'ի վե՛ր քրիստոնէից և զա՛մ
գիրս քրիստոնէից ջնջեաց և այ
րեաց: Եւ հրաման եհան ամենե
ցին ոչ ունիլ զգիրս քա՛ական:
զսոյն չարիս գործեցին մաքսիմիա
նոս յարևմուտս և դէոկղետիանոս
'ի կոստանդնու պօլիս և յարևելս
զամս .Ժ: և զանազան տանջանա
րանս դտին և նիւԹեցին: Եւ ըէ
գէօն մի որէ՝ .ճ՛ ոկ՟ . զօրք, զքրիս
տոնեայն 'ինեղ տեղի մի կալեալ
զամենեսեան կոտորեցին: որք հը
րամանաՃ նր՝ 'ի պատերազմ դնայ
ին: Եւ 'ի հռօմ և 'ի շրջակայս նր
՟Լ օրն՝ Ճբռ՟ անձինս նահատակեաց.
ընդ այր ընդ կին և ընդ մանկունս:
Զկոզմաս և զդամիանոս սպանին
'ի յայիաս քաղաքի: Եւ զՃբն դէ
որդ 'ի յաշխարհն պաղեստինոյ
մերձ Ճմի.ը՟ մղոն 'ի քաղաքն լոտոյ
նահատակեցին: Եւ 'ինէկոմիդայ

քաղաքն Իզնիմիտ յաւուր ծննդ-
դեանն քսի 'ի Ս. Ջ եկեղեցւոյն Տռ.
անձինս փակեցին և այրեցին։ Եւ
յետ այսքան չարեաց Դէոկղէտիա-
նոս 'ի Նիկոմիդայ քաղաքին դեղա-
տուութեք մեռաւ։ Եւ մաքսիմի-
անոս սրով խոցեալ բարձաւ։
Ասեն թէ երկուց մահն 'ի մի օր
հանդիպեալ՝ կորեան 'ի
կենաց։

37 Կալթերիոս մաքսիմիանոսն
ընդ կոստանդնի լուկիոսի
սկսաւ յամի տեառն. ՅԲ։ Կալթե-
րիոս երկու ամ թագաւորեաց և
կոստանդին. ԺԴ։ Սոքա երբև թա-
գաւորեցին՝ զկայսրութին յերկուս
բաժանեցին. զի կալթերիոս նըս-
տաւ յալամանաց աշխարհն և զամ
հիւսիսոյ կողմն և զասիա արեւե-
լեան աշխարհօքն կալեալ տիրեաց։
Եւ կոստանդին զդաղմատիա։
Կալթերիոս այր գթող և հեզարտ

'ի գիրս և 'ի խօսս և 'ի հարցմունս.
որ և կեանքն վաղամեռիկ եղև:
'ի ժամանակս սորին կատարեցաւ
որբուհին կատարինէ:

18 Կոստանդին յետ մահուան
հալածերոսի. ինքնակալեաց
ամս. ժգ: Էր սա այր հանճարեղ
և հեզ. որ հնազանդեցոյց զսպա
նիա գնալով բազում զօրօք 'ի վր̄
նորա: Զոր երկեալ ամ̄ աշխարհն
ներքին և արտաքին ամ̄ արևմտա
կան կողմանքն և խուդուխ և բար
բարոս ազգն հնազանդեցան որ
մա: Ընդ 'ի դառնալն 'ի պատերազ
մէն ամէն զգուստոր թօրին պօլթա
նիոյ զանհամեմատ գեղեցիկն սի
րեաց և ննջեաց ընդ նմա. բայց
ոչ ամուսնութ̄ի, այլ հարճութ̄ի
վասն սորա ամէն թէ յերկինս խաչ
ետես և լուաւ ձայն թէ այսու
նշանաւ ս յաղթէս: զոր արարեալ
յաղթեաց հռօմա և կոտորեաց բռ

զօրս Նոյա, և տիրեաց ամ աշ
խարհի:

39 Կոստանդիանոս մեծն՝ սկսաւ
յամի տեառն. յժգ. ինքնա
կալեալ ամս լա: Սա կոչեցաւ մե
ծահաւատ: Սա հրաման եհան զի
քրիստոնեայքն համարձակ կաց
ցեն: Սա կոստանդիանոս որդի էր
կոստանդեայ ՝ի հելինեայ ծնեալ.
զոր բերեալ կայսրայրոյց զնա հայր
իւր: Եւ նշանաւ խաչին զոր ե
թող նշանակ հայրն իւր՝ նուաճ
եաց ՝ի պատերազմ և յաղթեաց և
կալաւ զինքնակալութիւնն: Եւ
դրդմամբ կնոջն իւրոյ եբարձ ըզ
խաչն և հալածեաց զքրիստոնեայս
և եղև անբժշկելի գօթի. մինչ որ
մկրտեցաւ ՝ի սեղբեստրոսէ հայ
րապետէն և ապա բժշկեցաւ: Եւ
շինեաց ՝ի քաղաքն հռօմ զկայսերա
կան եկեղեցին սրբոյն Պետրոսի
և Պօղոսի և զՄկրտչին: Եւ զամ

իշխանութի՟ն հռօմայեւս Հայրա
պետին: Եւ յետոյ եկեալ 'ի բիւ-
զանդիա պարսպեաց զնա եւ կոչեաց
յիւր անունն: Սա ստացեալ ըզ-
մայրն իւր հեղինէ յեմ որ եգիտ
զսուրբ խաչն քի՟ի, եւ շինեաց զսբ
ծննդեան զսբ յարութիւնն զսբ
համբարձումն եւ զայլ տնօրինա
կանն, եկեղեցիսն: Եւ տարաւ Թա
գաւորին ընծայ զման 'ի կենաց
փայտէն: Եւ զմի բեեռն քի զոր
Թագաւորն եդ 'ի ծայր սանձին. որ
միշտ 'ի ձեռին իւրում կայր: Սմա
երեք որդիք եղեն. կոստանդին
կոստաս եւ կոստանդիանոս: Թա
ւորս սոքին եղեւ ժողովն նիկիոյ
յժը. հայրապետացն վն արիոսի:
Սա մեռաւ յնիկոմիդիա եւ բերեալ
Թաղեցաւ 'ի կոստանդնու
պօլիս:
40 Կոստանդին երկրորդն ընդ
կոստաս եւ կոստանդիանոսի՝

սոքա երեք եղբարք որդիք էին մե_
ծին կոստանդիանոսի. սկսան յամի
տն. ՅԾԴ. ինքնակալեալք զամս
ԻԴ: Սոքա ոչ կալան զհաստատու_
թիւն և ոչ առողջ խորհուրդ. մի
այն բաժանեցան 'ի հռօմայեցւոց
և յարեան 'ի վերայ միմեանց. և'իպա
տերազմին մեռաւ միջակ եղբայրն
որ ուղղափառ էր. և բազում զօրք
սպառեցան ևերկոքին հաշտեցան:
Եւ կրտսեր եղբայրն քանզի արիո
սական էր՝ պատրեաց զմեծ եղբայրն
զուղղափառն կոստանդիանոս. ա_
րար զնա արիոսական: Որ և բազում
հալածանս յարոյց ուղղափառաց.
և զմեծ եկեղեցին յանձնեաց չարա
փառացն: Յաւուրս սորա երևե
ցաւ խաչն լուսեղէն 'ի սուրբ քա
ղաքն եմ 'ի հայրապետութե մե
ծին կիւրղի: Որ գրեաց զպատ
ճենն առ կոստանդիանոս. բայց ոչ հա
ւատաց. և գնաց 'ի պարս 'ի պատե

բաղմ: Եւ աթանաս դարձաւ յաթ
սորանայն: Ցայսմ ժամանակի ան
տօն Ծննդեան. որն .ՃԺ. ամաց վերջ
Ճանեցաւ 'ի Թերայիթ: Եւ երբ
դարձաւ կոստանդին 'ի պատերազ
մէն, եմուտ յեկեղեցին արիոսաց
և հայհոյեաց զքս̃. և որ առ ժա
մայն հերձեալ պատառեցաւ փոր
նորա և աղիքն հեղեալ սատակե
ցաւ չար մահուամբ. և կորեաւ
'ի կենաց:

41 Յուլիանոս ուրացողն սկսաւ
յամի տեառն. ՅՀԵ. ինքնա
կալեալ ամս բ̃ և ամիս ը̃: Սա որ
դի գոլով եղբօրն կոստանդիանոսի
մեծի որ մեռաւ, ծնեալով յուլիա
նոս մանուկ մնաց. և անուն հօրն
կոստանդ: Սա գնաց յաթէնս և ու
սումնակցեցաւ գրիգորի և բարս
ղի: Եւ զօրացեալ կարգեցաւ 'ի
յորդւոյն մեծին կոստանդիանոսի
զօրավար արևելից: Եւ հպարտա

ցեալ 'ի վր̃ յաղթութե̃ն՝ կամէր
թագաւորել. զոր խմացեալ կոս
տանդեայ թագաւորին՝ սպանանել
կամէր զնա: Որ և փախեալ աննշա
նեայ զինքն ևեղև աբեղայ 'ի վանս
ինչ: Եւ երբև մեռաւ հօր եղբօր
որդին իւր կոստանդ թագաւորն,
սա ուրացօղս զքս̃ յուլիանոս՝ միա
հեծան թագաւորեաց հռօմայ և
կոստանդնու պօլսի: Եւ բազում
քրիստոնեայս նահատակեաց: Եւ
գնացեալ յէմ զօ̃մ տնօրինական
տեղին քս̃ի քակեաց: Եւ հրամայ
եաց ժողովել հրէից և շինել զտա
ճարն: զի սուտ հանցէ զբանն քս̃ի
որ ասէ, մի՛ մնասցէ այդր քար 'ի
վր̃ քարի: Եւ երբև կատարեցին,
էջ հուր յերկնից և այրեաց զօ̃մ
զշինքս տաճարին: և յուլիանոս բար
կացեալ նահատակեաց զկիւրեղ և
զմայր նորա: Եւ ասեն թէ՝ զոս
կերան եղիսէի մարգարէին եգիտ

և այրեաց հրով: և անցեալ գնաց 'ի
պարս պատերազմել ընդ շապհոյ,
և յայտնապէս 'ի նոյն տեղին սպա
նաւ 'ի մեռուկեռխուսէ հրամանաւ ար-

ճժածնին:

42 Յոբխանոս որ է Ճովխան սկը
սաւ յամի տեառն .յձա.
ինքնակալեալ ամս .ժա. և ոմանք
ա ամ ասեն թագաւորեալ ըստ
պատմագրացն հայոց: և ուղղափա
ռութբ վախճանեալ: Սաքրիստո
նեայ գոլով նախ մինչ զօրապետ
էր զօրացն յուլիանոսի՝ հարկեցաւ
ինմանէ կամ ուրանալ զքս ևկամ
զրկիլ 'ի պատուոյն: իսկ նա զպա
տիւն արհամարհեաց և զքս ոչ ու
րացաւ: Ըստ յետ սատակմանն յու
լիանոսի՝ զօրքն թագաւորեցուցին
զյոբխանոս ընդ եղբօր խուրումխա
զէնտիանոսի: Ըստ իբրև եկն'իպար
սից 'ի կոստանդնու պօլիս և նրս
տաւ յաթոռ թագաւորութե եղ

կելլիս յորբխանոս՝ ուրայսա՛ գքո՞ ոպ՞
ղյուլխանոս։ Սա հնազանդեցոյց
զաշխարհն պուլղարաց իւրով հըմ
տութ̃ն և կարողութեամբն։ Իր
սա յոյժ խոհեմ և հանճարեղ. այր
պարզախօս և պարզալեզու։ Սա
մինչ էր 'ի պատերազմին և տիրէր
քաղաքայն ալամանաց, եկն 'ի քա
ղաք մի յորբխոսս անուն. և յանկար
ծակի արեան բղխեաւ ընդ բերանն
և ընդ քիթն և այնպէս չարաչար
մեռաւ՛։

43 Լաղէնտխանոս որ Թարքմա
նի քաղաք կամուժեղ այր.
ընդ եղբօր իւրում վաղէսի սկսան
յամի տեառն. ՅԿԸ. ինքնակալեալ
ամս չորս ընդ վաղէսի։ Վաղէնտի
անոս ուղղափառ 'ի հռոմ, և վա
ղէս չարափառ 'ի կոստանդնու պօ
լիս։ Սա վաղէս աքսորեաց զհայ
րապետն մեր զտ̃ր ներսէս մ̃ծ սա
տակման որդւոյն իւրոյ։ Սա վա

ղէս կենաց 'ի մէջ գօղացւոց որ էն
տուտէնշք 'ի պատերազմ. և պար
տեալ փախեան 'ի նոցանէ. և գօ
թայիքն փութայան զօրօք զկնի
նորա և պատէկին զգեօղն յորում
էր: Եւ իբրև ոչ գտին, հուր ար
կին 'ի գեօղն: Եւ նա զի թաքու
ցեալ էր 'ի մարագ յարդի՝ ոչ կա
րաց զերծանիլ. այլ անդէն այրե
ցաւ յօրինակ համդերձեալ հրոյն
զոր ընդունելոց է դատաստանաւ
ըստ չար գործոց իւրոց: Սա հրա
ման էհան զկի և կարգաւորք եկե
ղեցւոյ սլեհեալ ելցէն 'ի պատե
րազմ. որպէս զի այնու ջնջեսցէ ըզ
քահանայս յաշխարհէս և մի մնա
ցէն: Իսկ վաղէնտխանոս աքիւն
ործկալով մեռաւ. որպէս եղբայր իւր
յովբիանոս:

44 Գրատիանոս որ Թարքմանի
շնորհազարդ, ընդ Թէոդո
սի սկսաւ յամի տն. ՅՂԷ. Ինքնա

կալեալ ամս զ̃ ։ Սա որդի էր վա
ղենտիանոսի. բայց թիւրածնունդ
և ոչ ուղիղ ամուսնութե̃ն ։ Յա
ճուրս սորա անհամար զօրք սպա
նիացւոց գային 'ի վե̃ր նորա. և նա
գնայց ընդդէմ նոցա ։ և յանկարծա
կի 'ի նեղուց ճանապարհին յարձա
կեցան թշնամիքն 'ի վե̃ր նր̃. և նա
արտասուօք խնդրեաց օգնութի
'ի քս̃է և յարձակեալ 'ի վե̃ր նոցա
.ը̃ռ. անձինս կոտորեաց 'ի թշնա
մեաց ։ Սա սրբեաց զա̃մ 'ի տաճի
այ 'ի հերձուածոյն արիոսի. վասն
զի յոյժ ուղղափառ էր 'ի հաւատս ։
'ի կերակուրս և յըմպելիս պարկեշտ
և սանձօղ ցանկութե̃ն ախտից ։
Սա անպատուեալ 'ի զօրացն, զայլ
ոմն մաքսիմիանոս անուն եդին
ինքնակալ ։ Ե̃ն գրատիանոս ո̀
տիւքն և ձեռօքն փաթթոռակեցաւ
և խարբալեցաւ ։ և մտեալ ոմանք
հատին զգլուխ նր̃. և զորդւոյ

նր յայլում տեղւոջ 'ի վիմն կո
չեցեալ քաղաք, յետ դարձի յաքսո
րանայն իւրոյ։ զոր սպանին հատ
մամբ գլխոյն և զմարմինն թողին
անթաղ գէշ անկեալ գազանաց
Թ երկրի և թռչնոց երկնից։
45 Թէոդոս մեծն և առաջին
քաղաքաւ սպանիացի, սկսաւ յամի
տեառն. ՅՂԸ. ինքնակալեալ ամս
.ժա̄. և ամիս .ժա̄։ Իսկ ոմանք
ասեն՝ ժէ. քանզի թուէն ընդ մէ
տասան ամին զ.ջ. ամն ևս որ ընդ
դրատխանոսի կաւառարեաց։ Սա
զամ տաճարս կռոց կործանեաց.
և զամ եկեղեցիս ազատեաց 'ի հերձ
ուածողաց։ Սա ամ ազգաց սիրելի
և հաճոյ լինէր։ որ և բազում բար
բարոսք քրիստոնեայք եղեն վասն
նր։ Սա եղեալ 'ի պատերազմ ընդ
բարբարոսն և յաղթեաց նոցա. ոչ
զօրօք, այլ աղօթիւք և պահօք
վանեաց զնս խապաւ։ Էր սա ար

դարադատ և խրաւայոյղ ՚ի պէտս
հասարակաց, Եւ ունէր սովորու
Թիւն՝ զկ յամ օր որ քան ծունր
կրկնէին ամէն մարդիք, զայն ՚ի հա
մարի պահէր։ Եւ յերեկոյն երբ
առանձնանայր, զայն քան ծունր
ինքն այ մատուցանէր և ասէր ար
տասուօք, տէ՛ր քե՛զ պարտ է ան
մահիդ երկրպագութի մատուցա
նել, և ո՛չ ինձ մահկանացուիս։
Սա եմուտ ՚ի մբ յարութին. և ՚ի
մտանելն ամ չիջեալ կանթեղքն
վառեցան։ Եւ խաղաղութբ հան
գեաւ ՚ի տր ՚ի մինդուլէ քաղաք,
և անդ Թաղեցաւ։ Եւ յետոյ բե
րաւ ՚ի կոստանդնու պօլիս։ Յա
ւուրս սորա երանելի հայրապետն
ներսէս դեղ մահու ընկալեալ ՚ի
պապ Թագաւորէն փոխեցաւ յաշ
խարհէս։ Եւ յոմանց ասի Թէ՝
ինե. ամ Թագաւորեալ։ Յաւուրս
սորա գողանային քրիստոնէայք

և հրէայք պղծեանս և սպանանէին
անհաւատ կոչելով զքրեարս: Ար
սէնիոս ծպնաւորն սէնատուրէր սո
րին. և հրաժարեալ գնաց յանա
պատ. և անդ կացեալ հանգեաւ
'ի քս̃:

46 Սբկադէոս որդի Թէոդոսի
ընդ եղբօր խուրոյ մնորիո
սի սկսան յամի տ̃ն .դ̃ծթ. ինք
նակալեալ ամս .ժդ̃: Էր սա այր
բարի և համծարեղ ա̃մ զօրութ̃բ:
Յաւուրս սորա Թագաւորն ալա
րիկոս գոթայւոց Թումիրզէ՝ է
ամց զծուծն բազում զօրօք, և հա
սեալ 'ի հռոմ եմուտ 'ի քաղաքն,
և սկսաւ անխնայ կոտորել զա̃մ
հասակ, և զա̃մ շէնքն հրով այրեալ
և յաւարեալ՝ և հրամայեաց զի նախ
'ի սրբութիւն սկսանիցին. այսինքն
'ի կայսերական եկեղեցիսն սր̃ցն
Պետրոսի և Պօղոսի, և ո̃ր փրկէին
և ո̃ր ա̃ծածնին: և կացեալ յա

ճուրս ինչ՞ գնայ։ Ըստ զայլ տե
ղիս եւս աւերեալ, 'ի Ճանապարհին
յանկարծամահ սատակեցաւ։
Աւուրց ինչ յետոյ եղ կայծակ
յերկնից եւ այրեաց զնուացեալ շէնքն
հռոմայ քաղաքին, եւ ուրախութի
յոյժ եղեւ բարբարոսաց։ 'ի սորին
արկադէոսի ամին վերջին հիմնար
կեցաւ քաղաքն վէնետիկ ձեռամբ
եւ բնակութբ գրօվացւոց որք էին 'ի
ըմնայցիք։ զոր յետ աւերման քաղա
քին իւրեանց է ամց, ռդ.ճ, ամ, որ
սատ եւ անդ բնակէին. եւ յետոյ է
կին 'ի վէնետիկ եւ շինեցին զնա
յետ քսի, դ.ճթ, ամ։

47 Օնորիոս որդի մեծին թէո
դոսի եւ եղբայր արկադէո
սի սկսաւ յամի տեառն .դ.ճիբ.
ինքնակալեալ ամս .ժե. էր սա գե
ղեցկապէս կարգաւորեալ սահմա
նօք նման հօրն իւրոյ թէոդոսի.
Սմա ասէին ընդէր ոչ սպանանես

վասպստամբքն ․ պատասխանէր, ո՞
թէ և զսպանեալսն կարէաք յարու-
ցանել։ 'ի սորին ժամանակս բըռ-
նաւոր ոմն անուն հերոմլգիանոս
․պ̃ճ̃հ․ նաւօք եկն յափրիկոյ 'ի
հռոմ 'ի վ̃ր կոստանդ տուկին։
Զոր թագաւորն 'ի կոստանդնու-
պօլսէ յղեալէր պահապան քաղա-
քին հռոմայ։ Զոր եղեալ կոստանդ
'ի վ̃ր հերոմլգիանոսի 'ի պատերազմ
զ̃ամ զօրսն ն̃ր կոտորեաց․ միայն
հերոմլգիանոս փախեալ զերծաւ։
Այս ոնորիոս բարի մահուամբ վախ-
ճանեցաւ․ ո՛չ թողեալ ժառանգ-
սրու զաւակ։ բայց երկու դուստր
մարիա և հեղենկիա, նմին հօրն
հետևեցան։ Մահուամբ երկրքեան
սոքա 'ի մի օր սալլաւ աւուրբք ըդ-
կնի մահուան հօրն խուրեանց մե-
ռան։ Յաւուրս սորա կիւրեղ ա-
ղեկսանդրացին փայլեաց յերկրի․
և Ջերոնիմոս ․Հ․ ամաց վախճա

նի ՚ի տէր։

48 Թէոդոս երկրորդ, որ և
փոքր կոչի, ինքնակալեաւ յամի
տեառն .ՆԸ. Թագաւորեաց ամս
ԽԲ։ Սա էր որդի արկադէոսի. ընդ
հօր եղբօրն խուրուժ զարևելեանն
կառավարէր զիշխանութիւն։ Եւ
յետ մահուան արկադէոսի միա
հեծան տիրեաց։ Սա ՚ի բարձր
հայք ՚ի գաւառն կարին որ յարե
ւելս քաղաք շինեաց որ՛ արզը
րում. որ Թարգմանի հող հռոմոց։
Ընդ այն ժամանակս մանդալայիք
անցին յափրիկոյ զծովն սեփիթէ.
և զամ աշխարհս սպանիոյ աւար
հարին և աւերեցին զերկիրն։
՚Ի սորին ժամանակին յայտնեցաւ
նեստոր պիղծն չեպիսկոպոսն կոս
տանդնուպօլսոյ։ Որ և ժողովն
.Բ.Ճ. հայրապետաց եղև յեփեսոս
քաղաքի։ Սա մեռաւ և թաղեցաւ
՚ի կոստանդնուպօլիս։ Յաւուրս

սորա եղեւ իր զարմանալի 'ի կրետէս
կղզին. զի սոնյ երեւեցաւ հրե-
այն ասելով թէ՝ ես եմ մովսէս որ
առաջնորդեցայ յա̃յ տանել զձեզ դար-
ձեալ յերկիրն աւետեաց ցամաք-
ոտիւք ընդ ծովն։ Զոր իբրեւ գը-
նային ընդ ծովն, բազումք խեղ-
դեցան. եւ որք զերծան, հաւա-
տացին 'ի քս̃։ 'Ի սորին ժամա-
նակին յարեան մանկունքն եփեսոսի
.ՃՂԹ. ամաց յետոյ եւ գնացին ա-
ռաջի Թէոդոսի. եւ դարձան 'ի յայրն
իւրեանց իսկոյն եւ ննջեցին 'ի քս̃.
որոց յիշատակաւ տ̃ր մեզ ո-
ղորմեսցի։

49 Մարկիանոս՝ յիշխանութեան 'ի
կոստանդնուպօլիս եղեւ
եղեւ թագաւոր. եւ վաղենտինիանոս
յարեւմուտս թագաւոր։ Սկսան
յամի տն̃ .ՆԿԷ. ինքնակալեալք
ամս. Է։ Սա մարկիանոս ըստ ո-
մանց՝ փեսայ գոլ ասի Թէոդոսի

'ի պօղքէր քօյր նորա: 'ի սորին
ժամանակն և հրամանաւ սորին ե‿
ղև ժողովն քաղկեդոնի. ո՟լզ. ե‿
եպիսկոպոսաց. աղաչանօք կնոջ իւ‿
րոյ պօղքէրի զոր 'ի նեստորէ մկըր
տեալ ասեն, և էր սիրելի փլաբիա
նոսի և թէոդորիտոսի. զորս նզովե
ցին յեփեսոս. և պօղքէր վասն նո
ցա վրէժ խնդրութեան ետ առնել
զժողովն քաղկեդոնի: Յետոյ և
'ի հայոց թարգմանչացն դրձելցն
յաթենայ՝ գնայրին անդ, բայց
ոչ յայտնեցին զինքեանս յահէ թա
գուհւոյն: որք էին յովսէփ կալա
նեցին և եզնակ կողբացին: և ե‿
կեալ 'ի հայս պատմեցին զբանս
ժողովոյն որք ասէին բ̄ կամս և
երկու ներգործութիւնս 'ի քս̃. և
զանգոսնելի կերս եդին 'ի քս̃:
Ըս՟ հալածեցին զհայս և զասորիս
առաւել զկարգաւորս և զաբե
ղայս: Ըս՟ զմիջագետս աշխարհն

անապատ արարին. զի աւելի քան Դ.Գ.Ճ. վանք քակեցին: Երբ զաբեղայսն գնէին 'ի մէջ տանի և խարշէին: Իսկ ինքն մարկիանոս յետ այս քան չարութեանն զոր հասոյց եկեղեցւոյ՝ սպանաւ 'ի զօրաց իւրոց դա՛ռն մահուամբ:

50 Լևոն առաջին մակ անուն ծնքոս կոչեցեալ, սկսաւ յամի տեառն .ՆՀԲ. ինքնակալեալ ամս .ԺԲ. և ոմանք .ԺԷ. աւուրս: Ընդ սորին ժամանակն Բ ոմանք 'ի զօրապետացն ապստամբեցան 'ի նմանէ. և բազում աշխարհաց արեւմտից տիրեցին. և զաւմ հարկան թագաւորին իւրեանց՝ առին. և բազում անձինս կոտորեցին. և տիրեցին բոլոր 'ի տալերոյ .ԺԲ. տարի: Վս սորին լռնի աւէն 'ի յազգէն հայոց լինիլ. և էր աս ն տեղեաւ մեծբնեցի և աղքատ շինական: և յաւուր միում մինչ աշխատեալ էր

և ննջեալ 'ի ներքոյ ծառի միում,
եկին առ նա արք երեք հրեշտակք և
խթեալ զնա ասեն, ընդէ՞ր անհոգս
ննջես թագաւորդ աշխարհի: Եւ
նա զարթուցեալ ասէ, զի՞ է զի ա-
սացէք ինձ չինականիս թագաւոր:
Եւ նոքա ասեն, մեք որդէք մար
գարէիցեմք. և ա͞ծ յայտնեաց մեզ
վասն քո որ թագաւոր լինելոց ես:
արդ արի՛ և գնա՛ 'ի կոստանդնու-
պօլիս: բայց ուխտեա՛ ա͞յ զի յայնմ
ժամուն յորում թագաւորեսցես՝
զո՛ր ինչ և հրաման լիցի քեզ յա͞յ
'ի մէնջ լուեալ՝ կատարեսցես. զի
հաստատեսցի թագաւորութիւնդ
քո: Եւ նորա գնացեալ անդ և կա
ցեալ սպասաւորութ͞ե մի առ մի՝
ել 'ի կայսրութի: Եւ իբրև գիտա
ցին թէ թագաւորեաց, գնացին
առ նա՛ և ասեն, այս է հրամանն
ա͞յ որ պատկերքդ զոր ունիք յեկե
ղեցիս և'ի տունս ձեր՝ խորտակել

հրամայեաց զի կուռք են։ և պիղծս
այս Լևոն յղեաց 'ի հռօմ և յա՟մ տե
ղիս և պատճառանօք զա՟մ պատ
կերս սբ՟ց և զփրկչին և զտիրամօրն
ետ բերել 'ի կոստանդնու պօլիս.
և բերեալ զա՟մ 'ի մի տեղի այրեաց
հրով։ Ը՟ յա՟ուրս սորա մարմին
եղիսէի մարգարէին փոխի յաղէկ
սանդրիա։ Ը՟ զմարմին ա՟ետա
րանչին մարկոսի գողացեալ 'ի վե
նետիկ տարան և անդ կայ փառօք
'ի ներքոյ սեղան միոյ։ Զայս Լևոն
կալա՟ աղէցա՟ութիւն սատանիկ,
և չարաչար մեռա՟ ըստ ար
ժանոյն։

51 Զենոն կոստանդ. իշխա՟ յամի
տ՟ն ՟նձդ՟։ ինքնակալեալ
ամս ժէ՟։ և ոմանք ասեն ՟ժգ՟։
Էր սա միաբնակ. բայց որկրամոլ։
որ յա՟ուր բարեկենդանի միոյ ա
գահեալ ուտէր և ըմպէր մինչ 'ի
լուսանալ պահոցն։ այս յետ ննջէ

լոյն յարուցեալ 'ի քնոյ՝ մնացած
ինչ մսոյ եգիտ յատամունսն: զի
հոռոմք ոչ ունէին սովորութիւն
յետ հացին լուանալ զբերանս իւ-
րեանց և մաքրել: Ապա կոչեալ զե-
պիսկոպոսն և հրամայէ նմա զի նը-
զովլիւք չափ՝ կանոնեսցէ զվերջին
բարեկենդանն առանց մսոյ առնել:
և այս մնաց մինչև ցայսօր 'ի մէջ
յունաց:

52 Զենոն երկրորդ՝ որ և հալա-
ծեաց զքաղկեդոնիկսն:
Սա կամեցաւ զորդին լեւոնի սպա-
նանել. բայց մայրն իւր զորդին
պահեաց և զոմն օտար մանուկ սը-
նուցեալ ետ զիւր որդի. զոր տա-
րեալ սպանին:

53 Անաստասիոս սկսաւ յամի
տ̃ն .չ̃ժ̃ա̃. ինքնակալեալ
ամս. ժ̃է̃: Սա միաբանակ էր և օգ-
նական հայոց և ասորւոց և հալա-
ծօղ երկաբնակաց: Եւ էր չարա

բախտ. վ՟ս զի 'ի բազում կողմանց
թշնամիք յարեան 'ի վ՟ր ն՟ր: Եւ
զի արիոսական եղև և թողաւ 'ի
ձեռայն ա՟յ: Սա խափանեաց ըզ
դպրատունսն 'ի ստամպօլ զի գործ
անարժան գտաւ 'ի ն՟ս արուամո
լութ՟. և եղև քաղաքին մեծ տըրտ
մութ՟ի: Յաւուրս սր՟ 'ի շարժէ
ընկղմեցաւ նիկապօլիս: Եւ ինքն
անաստասիոս դեղակուր
մեռաւ:

54 Յուստինոս որ և յուստինիանոս
սկսաւ յամի տեառն .ՇԻԷ.
ինքնակալեաւ ամն.Թ: Սա ջերմե
ռանդ գոլով 'ի հաւատս բ՟ բնու
թե, զա՟մ աքսորեալ եպիսկոպո
սունսն դարձոյց յաթոռս իւրեանց.
և զ,դ՟ Ճ, եկեղեցին եբաց. և բա
զում նեղութիւնս հայոց միա
բնակաց:

55 Յուստինիանոս երկրորդ սկսաւ
յամի տ՟ն, ՇԼԸ: ինքնակա

լեալ ամս․ իը։ Էր սա երկաբնակ։
Սա ասաց տօնել զտօն ծնընդ ա-
ւաջին ընդ յայտնութե։ Եւ յոչ ըն-
դունելն եհմայելոց, զօրք Թադա-
ւորին սասանիկ նեղութիւնս սպառ-
նային առնել։ Իսկ մեր ածածինն
երևեալ ՚ի սեանն որ ՚ի մեր յարու-
թեն՝ ջուր բղխեցոյց․ և բազում
բժշկութիս եղև այնուհետև և յա-
մօթ եղէն և գնացին։ Սա շինեաց
զսբն սոփիա ՚ի ստամպօլ։ Մեռաւ
և թաղեցաւ ՚ի նոյն եկեղեցին։
Ոմանք քւէր որդի ասեն զսա Յուս-
տինոսի։

56 Յուստինոս երրորդ, սկսաւ
յամի տեառն ․ջկդ․ ինք-
նակալեալ ամս ․ժբ․ ուղղափառ
հաւատով․ շինօղ եկեղեցեաց և
ամ աշխարհի ընդ արձակօղ խաղա-
ղութե․ բայց կին նր չար էր և
ինքն երկաբնակ։

57 Տիբերոս սկսաւ յամի տեառն
ծժ 111 ջձբ․

․ՇՁԲ․ ինքնակալեալ ամս Ա․ ո-
ղորմած և աղքատասէր․ մինչ զի
ոչ ինչ մնայ 'ի գանձս իւր։ Եւ
ետես զսաղ մի յարքունիս իւր և
խաչ 'ի վե՜ր նո՜ր։ և հրամայեաց զայն
բառնալ անտի ասելով, մեք քրիս
տոնեայքս 'ի ճակատս և 'ի դէմս
մեր դրոշմեմք զսա․ որոյ անպա
տիւ մնայն մեզանքէ մեզ․ և բար
ձին զայն։ և միւս ևս ել 'ի ներ
քոյ բարձին․ և երևեցաւ անհատ
գանձ 'ի ներքոյ նո՜ր․ և որքան ե-
կայ՝ գանձն այն մխելով ո՛չ պա
կասեաց։

58 Մաւրիկոս որ է մօրիկ՝ սկ-
սաւ յամի տեառն, ՇՁԳ․
ինքնակալեալ ամս Ի։ Սա օշականե
ցի և հայ ազգաւ․ և խաղաղասէր
աշխարհի։ Սա եբարձ զկուռծիկ զօ
րացն․ որում կուտեալ զօրքն 'ի վե՜
նո՜ր և նմա փախեաւ աննշանացեալ։
Յաւուրս նր գտաւ անկար պատ

մուծանն քս̃ի 'ի քաղաքն սրբութ
որ է կափառնայում. և տարեալ է
դին յէմ: Բայց ոմանք ասեն թէ
սպանին զմօրիկ և զորդիս նր̃: և
թագաւորն պարսից վրէժ խնդիր
եղև նր̃ և քակեաց զտ̃մ տուննն յու-
նաց մինչև յերուսաղէմ որ է հրէ
աստան:

58 Փոկաս սկսաւ յամի տ̃ն. զ̃ՃԲ̃
ինքնակալեալ ամս Ը̃: Յա
ւուրս սորա առին պարսիկք զեդեմ
և բազում աշխարհս 'ի յունաց:
Եկն 'ի յափրիկոյ հերակլիոս և ըս
պան զփոկաս: Յաւուրս սր̃ կար
գեցաւ յիշատակ և տօնն ամենայն
ս̃բցն տ̃յ 'ի նոյեմբերի
մէկին:

59 Հերակլիոս սկսաւ յամի տ̃ն
.զ̃ՃԺ. ինքնակալեալ ամս Իդ̃:
Յաւուրս սր̃ պարսիկք գնացեալ
յէմ այրեցին զտ̃մ տնօրինական
տեղիսն. և զս̃բ խաչն ընդ պատրի

արգին տարան գերի։ Եր՟ գնացեալ
հերակլ ՚ի պարս՝ յաղթեաց նց՟ և
դարձոյց զս՟բ խաչն յէ՟մ։ Եր՟ զար
դարեալ զինքն ունելով զս՟բ խաչն
՚ի յուսն ելանել կամէր ընդ դուռն
գողգոթային և փակեցաւ ընդդէմ
նր՟։ Եր՟ երևեալ հրեշտակ ա՟յ ա-
սաց, քս՟ փրկիչն աշխարհի ոչ ել ՚ի
տեղիս յայս զարդարեալ։ Եր՟ իբ-
րև լռեաց, պատատաւատուն հանդեր
ձիւ՟ եբարձ զխաչն, և բացաւ
դուռն։ Սա հրամայեաց զեկեղե-
ցին հռոմայ գլուխ եկեղեցի ասել։
զի ՚ի կոստանդիանոսէ մինչ ՚ի սա՛
զստամպօլսոյ եկեղեցին գլուխ ա-
սէին վս՟ թագաւորութեն՟։ Սա
զխաչն քս՟ի յերկուս բաժանեաց։
զմասն յէ՟մ և զմասն յստամպօլ եդ.
Եր՟ հիւանդացեալ և անդամալուծ-
լեալ մեռանի իւրով մահուամբ։
բայց անիծիւք։ զի էառ զդուստր
եղբօր իւրոյ ՚ի կնութի՟։ Առ սա

փնաց կաթուղիկոսն եղբր և եղև եր
կաբնակ. և մինչ 'ի Հ̄ կաթուղիկոս
Մնացին քաղկեդոնիկ։

60 Կոստանդին չորրորդ սկսաւ
յամի տն .զ̄ճ̄լ̄դ̄. ինքնա
կալեալ ամս .ժէ։ Սա ընդ Հայոց
եկեղեցւոյն գոլ միաբան, գնայէլ
'ի Հռոմ քահեաց զգեղեցիկ մար
մարաշէնսն. և տարեալ 'ի սիծիլիա։
ինքն ևս 'ի̇ չօրայն իւրեանց ըս
սպանաւ։

61 Կոստանդիանոս Է երորդ՝ սկը
սաւ յամի տեառն .ռկա̄. ինք
նակալեալ ամս .ժէ։ Ը̄ ոմանք
ժզ. ամ ասէն։ Ը̄ էր երկաբնակ։
Սա արար ժողով 'ի կոստանդնու
պօլիս .ճ̄ծ̄ի̄. եպիսկոպոսաց։ Սա
վճարեալ զկեանս իւր 'ի կոստան
դնու պօլիս մեռաւ անդ։

62 Յուստինիոս երկրորդ՝ սկսաւ
յամի տեառն .ռ̄հ̄է̄. ինք
նակալեալ ամս .ժ։ և ոմանք .ժդ.

ասէն: Սա հակառակ էր երկաբնա
կաց: Լևոն պատրիկն հատեալ ըզ-
քիթ նր̃ առաքեաց յաքսորս, և ինքն
թագաւորեաց 'ի տեղի նր̃:
63 Լեօն երկրորդ՝ սկսաւ յամի
տեառն. ՉԺԸ. ինքնակալեալ
ամս երեք. էր միաբնակ: Զսա դա
ւեալ Տիբերոս կամէր ունել և ա
ռաքել յաքսորս. զոր իմացեալ փա
խեաւ աննշանացեալ: Սա զօրա
վ̃ր եղև միաբնակ ազգաց:
64 Տիբերիոս երկրորդ սկսաւ յա
մի տեառն. ՈՂԸ. ինքնակա
լեալ ամս է: 'Ի սորին աւուրսն
մինչ Յուստինիանոս յաքսորս գոյր 'ի
սպուսալթայս, փախեաւ և գնաց
առ տաճիկսն. առեալ զդուստր իշխա
նի նոցա 'ի կնութի և դարձեալ
կայսրացաւ օգնականութբ̃ նոցա:
Եւ կալեալ զլէոն արտաքսօղն իւր
կորոյս մահուամբ:
66 Յուստինիանոս աքսորեալն կրկին

սկսաւ յամի տն ․ռղը․ ինքնակա
լեալ ամս է։ Եւ վասն աքսորա
նացն իւրոյ վրէժխնդրութեան՝
գետս արեանց հեղեղեաց յերկրի։
քանզի հատեալ էին զքիթ նր, և
ոչ քան կաթ արիւն կաթէր 'ի քըթ
թէն՝ ինքն այն չափ արիւն հեղոյր։
Եւ Փիլիպն եկն 'ի ստամպօլ և ըս
պան զնա հանդերձ որդւովքն
իւրովք։

66 Փիլիպպոս սկսաւ յամի տն
․ճդ․ ինքնակալեալ ամս ա
և կէս։ Սա զպատկերն իւր եդ 'ի
վր դրամից և առաքեաց 'ի հռոմ․
բայց ոչ ընկալան։ Եւ նա սխա
լեալ քակեաց զամ պատկերս ե
կեղեցեաց և փախեաւ 'ի սիծիլիա
և անդ կայր։

67 Անաստասիոս սկսաւ յամի տն
․ճե․ ինքնակալեալ ամս
երեք։ Սա առաքեաց կալաւ զՖի
լիպ և եհան զաչսն։ Եւ զի յոյժ

չոր ժողովլ զօրքն՝ ընկեցին զԹէո
դոս 'ի կայսրութէ: Եւ նա կնա
ցեալ եմուտ 'ի վանս և եղև քահա
նայ՝ անդէն մեռաւ:

68 Թէոդոս երրորդ սկսաւ յա
մի տեառն .ՉԲ. ինքնակալեալ ամս
մեկ: Եւ անկեալ յիշխանութենէ
և գնացեալ 'ի վանս եղև կղերիկոս
և զմնացեալ աւուրս իւր խաղա
ղութբ անցոյց:

69 Լեոն սկսաւ յամի տն .ՉԹ.
ինքնակալեալ ամս .ԻԵ:
Յաւուրս սորա եկին սարակինոսքն
և երեք ամնեղեցին զկոստանդնու
պօլիս. և ապա բազում նաւօք ե
կին 'ի վր քաղաքին ստամպօլայ:
Եւ զօրութբ տր խաչին տմնաւքն
'ի ծովն ընկղմեցան: Սա հրամայ
եաց կոխել և այրել զպատկերսն
տրունականս և տմ սրբց. որ և պատ
կերամարտ կոչեցաւ: Յաւուրս
սր տաճիկքն աֆրիկոյ ընդ ծովն

անցին և զամ սպանիա առին։ և
զմբ պետրոսի եկեղեցին ձիոյ և ջո
րոյ ախոռ արարին։

70 Կոստանդիանոս որդի լեոնի
սկսաւ յամի տեառն ·ՉԼԳ·
ինքնակալեաց ամս ·ԼԵ։ Սա և ս
հակառակ պատկերաց մեծ լինե
լով, զբազումս քրիստոնեայս 'ի սուր
սուսերի մաշեաց։

71 Լեոն սկսաւ յամի տն ·ՉԿԹ։
ինքնակալեաց ամս Ե։ Սա
անմտաբար եկեաց 'ի կեանս իւր։
Ըստ յաւուր միում յեկեղեցւոյն
ետես թագ մի որ ունէր 'ի վր իւ
ակն կայծ. և յափշտակեաց զթագն
եդ 'ի գլուխ իւր։ և խոկոյն կա
լաւ զնա ջերմն և վաղվաղակի մե
ռաւ։

72 Կոստանդիանոս մանուկն և
հեղինէ մայր նր սկսան յա
մի տեառն ·ՉՀԴ· մայրն և որդին
ինքնակալեալք ամս ·ԺԵ։ Սոնո

մախս այս ․ԺԲ․ ամաց թագաւո
րեաց․ և զկի եբարձ զիշխանութի
մօրն, վասն որոյ և մայրն խաբէու
թբ̃ կալեալ կուրացոյց զնա։ Վան
զի ցանկէր աշք նր̃, և մայրն դե
ղոց պատճառօք զխաւարեցո ցա
նօղն մարդոյց դեղ․ և ինքն կալա
վարեաց զթագաւորութիւն։ Յա
ւուրս սղ̃ ․ՃԺ․ եպիսկոպոսք ժո
ղովեցան և սահմանեցին զհոգին
սբ̃ ՚ի հօրէ և յորդւոյ բղխեալ․
որ էր թուականն քնի
․ՆՃՀԲ̃։
73 Նիկիփոռոս սկսաւ յամի տն̃
․Չ̃ՃԹ։ ինքնակալեալ ամս ինն։
Պատճառ թագաւորելոյ սորին
այս էր, զի տաճիկք նախատէին
զյոյնս թէ կին է թագաւորն
ձեր։ և վասն այնր արհամարհանաց
բերեալ թագաւորեցուցանէին զնի
կիփոռոս։ Իսկ նա գնացեալ ՚ի
պուլղարս, և եսպան զնա Փռանկ

ումն։ զի կասեաց սայլեւք զմատաղ
մանկունսն անողորմաբար, Յորոյ
ժամանակի տէրուԹիւն ինքնակալե
ցաւ 'ի յարեւելեան կողմն, և ամե
նևին ոչ ինչ դարձաւ և պա
կասեաց։

74 Միխայէլ սկսաւ յամի տն
·շղթ· ինքնակալեալ ամս
երկու։ Սա սպան զԹագաւորն լե
ոն զոր Թագաւորեցուցին զօրքն
յետ Նիկիֆորայ, և ինքն Թագա
ւորեաց։ Էր եր ողորմած յոյժ.
զի զորս Նիկիֆորոս ապահուԹբ
ժողովեալ, սա 'ի պատշաճաւոր
տեղիս շնորհեաց։ և խաղաղուԹբ
մեռաւ։ Մինչև ցաստ Փռանկքն
ընդդունին զԹագաւորն կոստանդի
նու պօլսոյ, և աստի 'ի հետ մի
խիլ ասեն 'ի Փռանսաս։ Զոր ես
յայսմ վայրի նախ գրեմ զկոստան
դնու պօլսոյն ըստ կարգուԹեն։
և յետոյ գրեմ զՓռանցնոյն. 'ի քնէ

Թիւն .ՃՂԹ. ամին ըստ համարա
գրական ոճոյն:

Թգ֊րք յ֊նց արտ֊մղլ Նափօղք:

1 Թ Էոփիլոս Թագաւորէց ամս .ԺԲ: Ցաւուրս սորա յայտնեցաւ ոմն Թամամ անուն, որ ասէր մի առնուլ հարկս 'ի քրիստոնէից: և ժողովեաց .Լռ. զօրս և գնացյեմ և քակեաց զԺԲ յարութեն: Ըստ սա ոչ կարաց օգնել ՄԲ տեղեացն.քն. և անարի իշխանութեամբ մ֊հարե
ցաւ 'ի կենաց:

2 Միխայէլ Թգ֊րց ամս Իդ. ո֊մանք ԺԵ. ասեն: Ըստ զի ոչ գ֊ոյր նր որդի, առ նըց գ֊ուլեն մու֊:

3 Վասիլ Թագաւորեաց ամս երկու. ոմանք .ԺԲ. ասեն: Այր ուրկրամուլ էր և վավաշոտ. մինչ որ կորի և ախտի իւրում հետևեալ իգասիրութեամբ բռնելով
զկէտնս իւր:

4 Լեոն որդի վասլի Թագաւո

րեաց ամս .Իզ։ Սա յանցաւոր գո
լով օրինացն այ, եառ դ՟ կին։ և
հռչակեաց թէ առանց մեղայց է
չորեքկնութին. և ո՛չ գոյր յանդի
մանիչ նորա։ քանզի և եպիսկոպո
սունքն աշաւէին զնմանէ որպէս
զթագաւոր է։

5 Աղէքս որդի Լէոնի թագաւո
րեաց ամ մի. և ոմանք երեք
ամէն։ Սա ոչ ինչ բարութէ լեալ
գործօղ գոլութեց անարժանի, մե
ռաւ առանց բարոյ։

6 Կոստանդին որդի Լէոնի թա
գաւորեաց ամս .ԾԵ։ Յա
ւուրս սորա երեք պատրիարգունք
նստան զկնի միմեանց 'ի ստամպօլ.
զորոց ասէն թէ կախարդ գոլով
'ի ներքոյ սեղանոյն կուռս դնէին։
վ՟ս այն բարձին յոյնք զվարագոյրն։
Եւ զայս անունս յետոյ 'ի վր՟ հայ
ոց եդին դիւանախանձք ոմանք 'ի
նոյանէ թէ հայք շուն պահեն 'ի

բանն խուբեանց։ Որոյ աստացողքն և
ընդունողքն եղիցին նզովեալք 'ի
քնէ այ մերմէ։

7 Ռոմանոս Թագաւորեաց ամս
·իը·։ Ոմանք զռոմանոս յա
ռաջ ասեն քան զկոստանդին։ Սա
հալածեաց զամ կարգաւորսն հայ
ոց որ էին յիշխանութեն հռոմոց։
Որք եկեալ յաշխարհս հայոց՝ շի
նեցին վանորայս և բնակեցան անդ։
